AZG NEW PDF.qxd 21/06/2010 22:36 Page 1

Ազգ
Azg
22 ՀՈՒՆԻՍ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 114 (4494)
ISSN: 1829-1651

# Սադրանք՝ խոչընդոտելու բանակցությունները

## *Աշխարհն անզո՞ր է սաստելու Արցախյան պատերազմում պարտված Ադրբեջանին*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Շփման գծում կրակոցները ու զոհերը, այնպես, ինչպես դա տեղի ունեցավ հունիսի 18-ի լույս 19-ի գիշերը, սառեցված որակվող հակամարտությունների տարածքում հաճախ են ապացուցում, որ նվաճվածի ու տուժածի հոգեբանության ակնհայտ դրսեւորումներ ունեցող երկրները, դրանց սուլթան-առաջնորդների նեղացած կեցվածքը կարող են «տաքացնել» հակամարտությունները: Եվ այդ տարածքում թքած, թե միջազգային իրավունք, հրադադար ու նման անվանումներ ունեցող ուրիշ թղթեր էլ են ստորագրվել այդ նույն առաջնորդների ձեռամբ:

Եվ այսպիսի իրավիճակում միջազգային հանրություն կոչվածը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահական եռյակը եւ այս շարքը համալրող ուրիշ կառույցներ ու պետություններ առավելագույնը, որ ասում են կամ կասեն, այն է, թե մարդկային կյանքն ամենաթանկն է:

Իհարկե, ու հաստատապես, մարդկային կյանքն ամենաթանկն է: Սակայն հիստերիայի ու դժգոհության միջավայրում թշնամանք սերմանող, քարոզող ու թշնամանքով գործող Ադրբեջանի տարածքում ավելի կարեւոր է ալիեւյան «սուլթանության» ամեն կերպ պահպանումը: Ասածն ամեն օր ադրբեջանական քարոզչամեքենան եթերից, տպագիր, նաեւ համացանցում օրը սկսում ու ավարտում է արտահայտությամբ, թե «այսօր ադրբեջանական հողերի օկուպացման NNNN-երորդ օրն է»:

Իսկ աշխարհն իբր «ջանք է թափում» լուծելու ղարաբաղյան հակամարտությունը...

*Տես էջ 3*

# «Անվտանգություն եւ զարգացում Հարավային Կովկասում. Հայաստանի դերը»

**Հունիսի 21-23-ը Բեռլին կատարած այցի շրջանակներում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը կհյուրընկալվի Կոնրադ Ադենաուեր հիմնադրամում: Քրիստոնեա-դեմոկրատներին մերձակա, հեղինակություն վայելող հիշյալ հիմնադրամը ստեղծվել է 1955-ին, 1964-ից կրում է Գերմանիայի առաջին դաշնային կանցլեր Կոնրադ Ադենաուերի անունը: 2010-ից հիմնադրամը ղեկավարում է Եվրոպական խորհրդարանի նախկին նախագահ Հանս Գերտ Փյոթթերինգը:**

**Հունիսի 22-ին կայանալիք Հարավային Կովկասի զարգացման քաղաքական եւ տնտեսական ուղիների մասին նախատեսված միջոցառումը կսկսվի ժամը 16-ին՝ Ադենաուեր հիմնադրամի նախագահ Հանս Գերտ Փյոթթերինգի ողջույնի ելույթով:**

**16:15-ին ամբիոնը կտրամադրվի նախագահ Սարգսյանին, որ հանդես կգա «Անվտանգություն եւ զարգացում Հարավային Կովկասում. Հայաստանի դերը» վերնագրյալ ելույթով: Միջոցառումը վարելու է գերմանական տնտեսության արեւելյան հանձնախմբի տնօրեն դոկտոր-պրոֆեսոր Ռայներ Լինդները:**

Ան. Հ.
Գերմանիա

ԵԽԽՎ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՑ ԱՌԱՋ

# Չավուշօղլուի ջանքերը՝ առայժմ անարդյունք

**«Այս նստաշրջանում անհնար է վերականգնել Ղարաբաղի հարցով ենթահանձնաժողովի գործունեությունը», Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի երեկ մեկնարկած նստաշրջանից առաջ տված ասուլիսում հայտարարեց ԵԽԽՎ նախագահ Մեվլութ Չավուշօղլուն:**

**Ղարաբաղյան հակամարտության հարցով ԵԽԽՎ շրջանակներում ենթահանձնաժողովի աշխատանքները վերականգնելու ուղղությամբ Չավուշօղլուի նախաձեռնությունը, իր իսկ խոստովանությամբ, ներկա դրությամբ իրականանալի չէ: «Չեմ կարծում, թե այդ հարցի կենսագործումը տեղի կունենա այս նստաշրջանին: Բայց որպես ԵԽԽՎ նախագահ ես կհանդիպեմ ադրբեջանական եւ հայկական պատվիրակությունների ղեկավարների հետ: Այդ հանդիպումներին կմասնակցեն մեկական խորհրդարանական յուրաքանչյուր պատվիրակությունից», ասաց Չավուշօղլուն:**

**Հետաքրքրական է, որ Չավուշօղլուն հավաստիացրեց, թե ինքն է խնդրել ԵԽԽՎ բյուրոյին որեւէ որոշում չկայացնել, քանի դեռ տեղի չի ունեցել հանդիպումը հայկական եւ ադրբեջանական պատվիրակությունների ղեկավարների հետ: Այդ հանդիպումներին կհետեւի ԵԽԽՎ նախագահի հաշվետվությունը բյուրոյին, որից հետո էլ կորոշվի, թե ինչ անել:**

**Ստրասբուրգ Հայաստանից մեկնել են պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանը, Հերմինե Նաղդալյանը (ՀՀԿ), Արմեն Ռուստամյանը (ՀՅԴ), Արծրունի Աղաջանյանը (ՕԵԿ) եւ Զարուհի Փոստանջյանը («Ժառանգություն»):**

**Ինչպես հայտնի է, ԵԽԽՎ 34 պատգամավորներ հանդես են եկել հայտարարությամբ՝ կոչ անելով վերաակտիվացնել դեռեւս 2005 թ. ընդունված 1416 բանաձեւի հիման վրա ստեղծված Լեռնային Ղարաբաղի հարցով ենթահանձնաժողովը: ԵԽԽՎ բյուրոն կարող է քվեարկել Լեռնային Ղարաբաղի հարցով ենթահանձնաժողովի վերականգնման օգտին: Այդ դեպքում հայկական կողմը կարող է բոյկոտել ենթահանձնաժողովի գործունեությունը զրկելով դրան լիազորություններից:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# BP-ն հեռանում է Ադրբեջանից

**British Petroleum-ը դադարեցնում է իր գործունեությունը Ադրբեջանում: Նման տեղեկություն էր հայտնվել ադրբեջանական կայքէջերում դեռեւս նախորդ շաբաթավերջին: «<u>Ազգը</u>» փորձեց հենց ընկերությունից ճշտել տեղեկության հավանականությունը, սակայն ապարդյուն:**

**Ամեն դեպքում, ըստ նույն աղբյուրների, ընկերությունը դադարեցնում է իր գործունեությունը Ադրբեջանում, եւ այդ հիմքով էլ նրա գրանցումը կհայտարարվի անվավեր:**

**Այս տեղեկությունը կարող է նշանակել ադրբեջանական նավթային միջոցների որոշակի կրճատում ու դրա հետ մեկտեղ որոշ նախագծերի սառեցում, ինչպես նաեւ ռազմական գործողությունների չգնալու զսպող միջոցներից մեկի չեզոքացում:**

Ա. Հ.

# ԵՄ. Միջազգային լուրջ ուշադրություն Չայլուի միջադեպին

Հարավային Կովկասում Եվրոմիության հատուկ ներկայացուցիչ **Փիթեր Սեմնեբին** մտահոգություն է հայտնել հունիսի 18-ի լույս 19-ի գիշերը Չայլու գյուղի մոտակայքում հրադադարի խախտման առնչությամբ եւ նշել, որ դա պետք է միջազգային հանրության լուրջ ուշադրությանն արժանանա: Հայաստանում գտնվող Հարավային Կովկասում Եվրոմիության հատուկ ներկայացուցիչը երեկ հանդիպել է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանի** հետ՝ քննարկելու Հայաստան - Եվրոմիություն 2009-2011 թվականների գործողությունների ծրագրին վերաբերող հարցեր:



Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակի փոխանցմամբ, զրուցակիցներն անդրադարձել են նաեւ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանը, մասնավորապես՝ Ադրբեջանի վերջին գործողություններին: Արթուր Բաղդասարյանը նշել է, որ միջազգային հանրությունը պետք է դատապարտի նման գործողությունները եւ Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունները, որպեսզի դրանք այլեւս չկրկնվեն:

Ա. Հ.

# Աշխատանքի եւ սոցապ նախարարի պաշտոնը ոչ մեկի հագով չէ՞

**Կարճ ժամանակում երրորդ անգամ փոխվում է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարը: Ինչպես ժամանակին այդպես էլ կարգին բացատրություն չհնչեց, թե ինչու փոխարինվեց նախկին նախարարը՝ ԲՀԿ անդամ Գեւորգ Պետրոսյանը, այնպես էլ հիմա պարզ չէ, թե ինչո՞ւ է հրաժարական ներկայացրել Մխիթար Մնացականյանը: Իսկ այն բացատրությունը, որ հնչեցրեց երեկ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի մամուլի խոսնակ <u>Խաչիկ Գալստյանը</u>, թե կարճաժամկետ առումով ԲՀԿ նախագահի դրած խնդիրները նախարարն իրականացրել է, էլի պարզություն չի մտցնում խնդրում, այդ բացատրությունից ընդամենը կարելի է տարատեսակ ենթադրություններ անել. կամ Մ. Մնացականյանը նշանակվել է հենց որպես անցումային նախարար, քանի որ այդ պահին այլ հարմար թեկնածու չի գտնվել, կամ նշանակումից հետո ի հայտ են եկել խնդիրներ, որոնք Մ. Մնացականյանին չեն թողնում նորմալ աշխատել, կամ նրա աշխատանքից են դժգոհ մնացել, կամ էլ հայտնվել է մի այնպիսի կադր (դա կարող է ոչ միայն ԲՀԿ-ի, այլեւ երկրի նախագահի, վարչապետի կադրը լինել), որի դեմ ոչ մի Մխիթար էլ չի դիմանա... Բոլոր դեպքերում արժե հիշել կառավարության վերջին նիստի ժամանակ Տիգրան Սարգսյան-Իշխան Զաքարյան-Մխիթար Մնացականյան եռախոսությունը, որի արդյունքում ի վերջո Մնացականյանին տրվել էր եւս մի շաբաթ՝ պետական նպաստների համակարգում տեղեկատվության հավաքագրման արդյունավետության հայեցակարգը լրամշակելու համար: Այս նիստում էր, որ Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարյանն ասել էր, թե «Փարոս» ծրագրում տեղեր կան, որ մինչեւ 32-35 տոկոսով գումարներ են տանում սխալ տեղեկանքների հիման վրա, մի քանի միլիարդ դրամների մասին է խոսքը»: Այս խոսքից հետո բանավեճ էր ծագել Մ. Մնացականյանի եւ Ի. Զաքարյանի միջեւ: Զաքարյանը Մնացականյանի ներկայացրած հայեցակարգն ընդամենը միջոցառումների ժամանակացույց էր անվանել:**

**Դեռեւս հայտնի չէ, թե ո՞ւմ թեկնածությունն է քննարկվում թափուր պաշտոնի համար:**

Մ. Խ.

ՉԱՅԼՈՒ

# Ճշմարտության պահը

Քաղաքական գործընթացում միշտ էլ գալիս է ճշմարտությունն ասելու պահը, այսինքն, երբ հարկավոր է մի կողմ դնել ամեն տեսակ ձեւականությունը, դիվանագիտությունը եւ ասել այն, ինչին համաձայն են բոլորը, ինչքան էլ կոշտ հնչի: Այսօր արդեն իսկ հասունացել է պահը՝ ասելու ճշմարտությունը ղարաբաղյան հարցի եւ միջազգային միջնորդների մասնակցությամբ ընթացող բանակցությունների մասին: Այդ ճշմարտությանը ասելուն մեզ դրդում է ադրբեջանական կողմի լկտի ու նենգ պահվածքը, լկտի, որովհետեւ հղփացած սեփական նավթից ու կուտակած հարստությունից, նրանք որոշել են, որ կարող են գնել ամենքին եւ ամեն ինչ, նենգ՝ որովհետեւ բանակցություններին նրանք նստում են միմիայն խաբելու, ստելու եւ հետո պայմանավորվածությունները չկատարելու համար: Այդ ճշմարտությունը ասելուն է մղում մեզ նաեւ Մարտակերտի սահմանին զոհված մեր հայորդիների արյունը, տղաների, որոնք իրենց երիտասարդ կյանքը տվեցին հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Եկել է պահը, որ Հայաստանը հրաժարվի «հարցի լուծման փոխզիջումային տարբերակ» բառակապակցությունից եւ հայտարարի, որ խնդիրը չի կարող փոխզիջումով լուծվել այն պարզ տրամաբանությամբ, որ հայկական կողմը ղարաբաղյան հարցի ծագման առաջին իսկ օրվանից հարցի լուծման քաղաքակիրթ տարբերակներ է առաջարկել՝ բանակցությունների միջոցով: Սակայն բոլոր այդ առաջարկները մերժվել են եւ Ղարաբաղի հայության ու Հայաստանի դեմ հրահրվել է լայնամասշտաբ պատերազմ, որն ավարտվել է ադրբեջանական կողմի լիակատար պարտությամբ: Սակայն, չգիտես ինչու, մենք ինքներս ենք հրաժարվում մեր իսկ հաղթանակներից եւ հերթական անգամ հայտարարում տխմար այդ բառը՝ «փոխզիջում», ու նստում բանակցությունների սեղանին մեկի հետ, ում մասին արդեն իսկ գիտենք, որ նրա համար այս ողջ գործընթացն ընդամենը ժամանակ ձգելու միջոց է եւ առաջին իսկ առիթի ու հնարավորության դեպքում հերթական պատերազմը կսանձազերծի: Ու ամեն տեսակի «փոխիջումային» բանակցություններ ու կնքված պայմանագրեր, էլ չեմ խոսում միջազգային գոյություն չունեցող «երաշխիքների» մասին, կջնջվեն, ու Ադրբեջանը կփորձի նորից խնդիրը լուծել պատերազմի միջոցով: Հետեւաբար ոչ թե փոխզիջումների, այլ պատերազմում հաղթած երկրի ու ժողովրդի անունից պետք է գնալ բանակցությունների՝ պահանջելով ԼՂՀ ճանաչումը, հակառակ դեպքում այդ ճանաչումը կատարենք ինքներս՝ ապահովելով ԼՂՀ-ի եւ ընդհանրապես Հայաստանի հարավային սահմանների պաշտպանությունը: «Փոխզիջում» բառակապակցությունը վիրավորական է հնչում պատերազմում հաղթած ժողովրդի համար: Դա վիրավորում է նաեւ այդ պատերազմում զոհված մեր ազատամարտիկների եւ վիրավորված տղաների, ինչպես նաեւ արհամարհանք է ընդամենը 2 օր առաջ սահմանը պահելիս իրենց կյանքը տված տղաների հիշատակի համար:

Իսկապես, եկել է ճշմարտության պահը ասելու, որ ոչ մի սանտիմետր հողի զիջման մասին խոսք անգամ լինել չի կարող եւ ինչպես ամեն մի երկրի, այնպես էլ ԼՂՀ-ի դեպքում պետք է հարգվեն նրա տարածքային ամբողջականությունը եւ սահմանները: Եվ միայն դա կարող է լավագույն հուշարձանը լինել ռազմի դաշտում զոհված բոլոր մարտիկների համար:

ԱՐՍԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
Արմենական-ՌԱ կուսակցության փոխատենապետ

AZG NEW PDF.qxd 21/06/2010 21:51 Page 1



# Սպիտակ հագուստը, արեւային ակնոցը, հովանոցն ու գոլ թեյը կօգնեն դիմակայելու շոգին



«Ամառային եղանակն օրգանիզմի համար ունի և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն», երեկ «Նովուսի» կենտրոնում ասաց առողջապահության նախարարության հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության պետ **Արտավազդ Վանյանը**:

Հուլիս-օգոստոս ամիսներին հարկավոր է պաշտպանվել ուլտրամանուշակագույն ճառագայթներից, որոնց բացասական ազդեցությունը մեծանում է ցերեկային ժամերին՝ ժամը 12.00-17.00: Ուլտրամանուշակագույն ճառագայթումը վտանգավոր է հատկապես ծերերի, մանուկների, հղի կանանց ու քրոնիկական հիվանդություններով տառապող մարդկանց համար: «Տարվա մյուս եղանակներին, երբ ուլտրամանուշակագույն ճառագայթների չափանիշները բարձր չեն, դրանք ունենում են նաեւ դրական ազդեցություն, օրինակ՝ բարձրացնում են մարդու դիմադրողականությունն ու աշխատունակությունը», ավելացնում է Արտավազդ Վանյանը: Չպաշտպանվելու դեպքում ուլտրամանուշակագույն ճառագայթումը կարող է առաջացնել արեւահարություն, արեւային այրոցներ, մաշկի կարմրություն: Ա. Վանյանի խոսքով՝ ամռանը բարձրանում է մարդու քրտնարտադրությունը՝օրգանիզմից հեռացվում է 2-2,5 լիտր, շատ շոգ եղանակին՝ մինչեւ 4 լիտր հեղուկ, իսկ 4 լիտր հեղուկ կորցնելու դեպքում մարդը կարող է սրտի նոպա ունենալ: Ա. Վանյանը խորհուրդ է տալիս ամռանը շատ հեղուկներ օգտագործել, տնից դուրս գալիս կրել արեւային ակնոց, գլխարկ, հովանոց, նաեւ սպիտակ կամ բաց գույնի բամբակյա հագուստ:

Մեզանում այլեւս նորություն չեն ամռան ամիսներին արձանագրվող սննդային թունավորումներն ու վարակիչ հիվանդությունների դեպքերը: «Այս առումով մեր ցավոք խնդիրներից մեկը փողոցային առեւտուրն է, որը կազմակերպվում է ոչ սահմանված վայրերում: Վարակի փոխանցման գործոն կարող է դառնալ հենց փողոցներում պատրաստվող կամ վաճառվող սննդամթերքը, հետեւաբար պետք է խուսափել փողոցային առեւտրից», նշեց Ա. Վանյանը:

Հասարակությունը պետք է հասկանա, որ չի՛ կարելի գնել արեւի տակ դրված ձուկն ու ձմերուկը: Եթե մարդիկ չօգտվեն փողոցային առեւտրից, տրամաբանական է՝ այն մի օր կվերանա:

Ամռանը քիչ չեն նաեւ մրսածության դեպքերը: Շոգ եղանակին բարձր ջերմ չունենալու համար հարկավոր է խուսափել խիստ սառեցված հյութերից եւ օդորակիչի սառը օդի առաջ նստելուց, իսկ ծարավը հագեցնելու համար լավ կլինի օգտագործել սառը կամ գոլ թեյ, բալի կամ հոնի հյութ եւ հնարավորինս զերծ մնալ կոֆեին եւ շաքար պարունակող հյութերից:

Ասուլիսի մյուս բանախոսը՝ ԱՆ բուժօգնության կազմակերպման վարչության պետ **Վահան Պողոսյանը**, տեղեկացրեց, որ առողջապահության նախարարը հրահանգել է, որ Երեւանի ու մարզերի բուժհիմնարկները՝ պոլիկլինիկաները, հիվանդանոցներն ու շտապօգնության ծառայությունները, ցուցաբերեն արագ ու որակյալ բուժօգնություն:

Այս սեզոնին պակաս վտանգավոր չեն օձերի խայթոցները. շոգ օրերին օձերն ակտիվանում են: Վ. Պողոսյանը նշում է, որ առողջապահության նախարարությունն ամեն տարի հրահանգ է իջեցնում, որ բուժհիմնարկներն ապահովվեն անտիգյուրզին դեղորայքով, բոլոր բժշկական հիմնարկներն արդեն վաղուց ձեռք են բերել անտիգյուրզին, որը ժամանակի ընթացքում թարմացնում եւ լրացնում է:

Առհասարակ մարդիկ պետք է շատ զգույշ լինեն. չփորձեն օձ բռնել, իսկ դաշտերում աշխատողները հագնեն ռետինե կոշիկներ:

Ա. Վանյանը նաեւ զգուշացրեց, որ կարելի է լողանալ միայն վերահսկվող, քլորացվող ջրավազաններում, բայց ոչ՝ դեկորատիվ, «Մեր ծնողները պետք է գիտակցեն ու թույլ չտան, որ երեխաները լողանան դեկորատիվ ջրավազաններում»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Անչափահասների շրջանում հանցագործությունների աճը պայմանավորված է սոցիալ-տնտեսական վիճակով

ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության պետի տեղակալ **Նելլի Դուրյանի** ներկայացրած փաստերի համաձայն՝ նախորդ տարվա 4 ամսում անչափահասների շրջանում հանցագործությունների թիվն աճել է 28-ով: Եթե նախորդ տարի նույն ժամանակահատվածում կատարվել էր 92 հանցագործություն, ապա այս տարի գրանցվել է 113 դեպք: Սպանության դեպքեր չեն արձանագրվել, սակայն ավելացել է նոր հանցատեսակ՝ թղթադրամի կեղծում: Հոգեբան Դավիթ Ամիրյանի եզրակացությամբ՝ անչափահասների շրջանում հանցագործությունների հիմնական պատճառը սոցիալ-տնտեսականն է: Այդ կարծիքին նա հանգել է՝ ուսումնասիրելով հանցագործությունների տեսակները: «Նվազագույն պահանջմունքը չի բավարարվում, սոված են, տուն չունեն, տաք չէ»:

Մոնթե Մելքոնյանի անվան դպրոցի տնօրեն **Ռուզաննա Ազիզյանի** մեկնաբանությամբ՝ անչափահասի դաստիարակության սխալ սկիզբը դրվում է ընտանիքում, հետո՝ դպրոցում եւ հասարակությունում: Երեխայի դաստիարակության համար առաջնահերթ նշանակություն ունեն ընտանիքն ու ծնողների կերպարները, սակայն երեխա-ծնող հարաբերություններում էլ կրկին առկա է սոցիալական պատճառը: Փորձելով լուծել կենցաղային սոցիալական հարցեր՝ ծնողները երեխաների դաստիարակությամբ քիչ են զբաղվում, եւ ծնողի «ժամանակ չունեմ»-ի բացը երեխան լրացնում է փողոցում կամ ինտերնետ ակումբներում:

Հոգեբանի խոսքերով՝ երեխայի վրա բացասաբար են անդրադառնում հեռուստատեսությունը, ինտերնետային խաղերը, սոցիալական ծանր պայմաններն ու ընտանիքում առկա բռնությունը: «Հաճախ երեխաներն ընկնում են ծայրահեղության մեջ: Ծնողներն այլ բան են դաստիարակում, սակայն հեռուստատեսությամբ այլ բան է տեսնում: Հետո իջնում է փողոց ու նկատում անպատժելիություն, անօրինականություն: Առաջանում է հակասություն, եւ հաճախ երեխան չի կարողանում ճիշտ կողմնորոշվել», ասաց նա «Հայելի» ակումբում:

Հոգեբանը խորհուրդ է տալիս ծնողներին՝ լինել առավել ուշադիր: Հատկապես անցումային շրջանում գտնվող երեխաների հետ շատ զրուցել: «Նրանց մեջ բարին, չարը, լավն ու վատը ձեւավորված չեն: Պետք է բացատրել, ներկայացնել խնդրի բոլոր կողմերը: Եթե ընտանիքում ու դպրոցում նրան դաստիարակում են որպես քաղաքացու բոլոր դրական կողմերով, եւ նա փողոցում հանդիպում է բացասականի, ապա հավանականությունը մեծ է, որ նրա վրա փողոցային վատ կյանքն ազդեցություն չի թողնի»:

Կալանավայրում հայտնված անչափահասներն էլ հետագայում դժվարությամբ են ինտեգրվում հանրությանը. մեղավորը հանրային կարծիքն ու հասարակության վերաբերմունքն են: Հոգեբանի ներկայացրած սոցիոլոգիական հարցման արդյունքի համաձայն՝ «Ինչպե՞ս կվերաբերվեիք, եթե ձեր հարեւանը լիներ նախկինում դատված» հարցին հասարակության 80 տոկոսը բացասական պատասխան է տվել: «Այս պարագայում մենք նրան անտեսում ենք, կոտրում եւ ստիպում չարանալ ու բարկանալ: Փակում ենք բոլոր դռներն ու նա հայտնվում է փակուղում»:

Հասարակության բացասական վերաբերմունքը կալանավորների հանդեպ համամարդկային խնդիր է, սակայն, ի տարբերություն արտասահմանի, Հայաստանում պետական որեւէ մակարդակով չեն լուծվում անչափահաս հանցագործների խնդիրները: «Պետությունը պետք է նրանց հովանավորի: Եթե անչափահաս տղան երկու տարի գաղութում է անցկացրել, չի նշանակում, որ նա այլեւս ապրելու, սիրելու, աշխատելու իրավունք չունի: Այլ պետություններում գաղութից հետո օգնում են գոնե միջնակարգ կրթություն ստանալ, որեւէ արհեստ սովորել, մինչդեռ Հայաստանում դա արվում է ցածր մակարդակով՝ հասարակական կազմակերպությունների՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցով»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Հայաստանի տնտեսական աճը հասավ 8,8 տոկոսի

**Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2010-ի հունվար-մայիս ամիսների օպերատիվ սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական աճը կազմել է 8,8 տոկոս: Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 1 տրիլիոն 16 մլրդ 842 մլն դրամ: Հատկանշական է, որ աճ է արձանագրվել նաեւ մայիսին ապրիլի համեմատ՝ 14,3 տոկոսով:**

**Ըստ տնտեսության ճյուղերի՝ հետեւյալ ցուցանիշներն են արձանագրվել: Արդյունաբերությունում աճը կազմել է 12,1 տոկոս: Սակայն մայիսին ապրիլի համեմատ արձանագրվել է անկում 6,3 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրությունը հունվար-մայիսին աճել է 14,6 տոկոսով, իսկ մայիսին՝ ապրիլի համեմատ, նվազել՝ 7,9 տոկոսով: Գյուղատնտեսությունն ունեցել է 0,9 տոկոս աճ, իսկ մայիսին՝ ապրիլի նկատմամբ, 54,5 տոկոս աճ: Մանրածախ առեւտրում արձանագրվել է 1,3 տոկոս աճ, իսկ մայիսին՝ ապրիլի համեմատ, 2,4 տոկոս անկում: Զգալի՝ 12,5 տոկոսով աճ է արձանագրվել շինարարությունում, իսկ մայիսին՝ ապրիլի համեմատ, այդ աճը ավելի քան կրկնակի է եղել՝ 109,9 տոկոս: Ծառայությունների ոլորտում արձանագրվել է 6,8 տոկոս աճ, իսկ մայիսին՝ ապրիլի նկատմամբ՝ 0,8 տոկոս անկում:**

**Արտաքին առեւտրաշրջանառությունն ավելացել է 34,5 տոկոսով եւ կազմել 1 մլրդ 776 մլն դոլար: Արտահանումը կազմել է գրեթե 364,1 մլն դոլար, դարձյալ արձանագրելով էական՝ 64,5 տոկոս աճ: Սակայն մայիսին՝ ապրիլի համեմատ, արտահանումը նվազել է 18,7 տոկոսով: Ներմուծումը կազմել է գրեթե 1 մլրդ 411 մլն դոլար, աճելով 28,5 տոկոսով: Մայիսին՝ ապրիլի համեմատ, ներմուծման աճը կազմել է 4,5 տոկոս: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը, այդուհանդերձ, շարունակել է խորանալ, կազմելով մոտ 1 մլրդ 47 մլն դոլար:**

**Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հունվար-մայիսին կազմել է մոտ 103 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է 131 հազար դրամ, պետականում՝ 84 հազար դրամ: Հունվար-մայիսին գնաճը փոքր-ինչ նվազել է եւ կազմել 7,6 տոկոս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Պաշտոնապես գրանցված գործազուրկների քանակն ավելացել է 1,2 տոկոսով:**

**Այսպիսով, տնտեսական աճի ցուցանիշը շարունակել է բարձրանալ՝ կազմելով 8,8 տոկոս, սակայն հիմնականում շինարարությունում՝ ճանապարհաշինություն, ջրագծեր եւ այլ, իրականացվող պետական ծրագրերի շնորհիվ: Մասնավոր շինարարության տեմպերը դեռ հեռու են նախաճգնաժամային վիճակին հասնելուց:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Օտարալեզու» փաթեթի քննարկման շարունակությունը՝ հունիսի 23-ին

**Ազգային ժողովի արտահերթ նիստը, որտեղ քննարկվելու էր օտարալեզու դպրոցներ բացելու վերաբերյալ սկսված եւ ընդհատված քննարկումը, սպասվում էր, որ տեղի է ունենալու հունիսի 22-ին: Սակայն ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը որոշում է ստորագրել ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ հունիսի 23-ին արտահերթ նիստ հրավիրելու մասին, նախաձեռնողի սահմանած օրակարգով, այդ թվում՝ «Լեզվի մասին» եւ «Հանրակրթության» մասին օրենքներում փոփոխություններ կատարելու փաթեթը:**

Մ. Խ.

# Փորձելու են քիչ ջուր վերցնել Սեւանից

## *Հավաստիացրեց ջրային տնտեսության կոմիտեի նախագահը*

**Ներկա պահին Սեւանից վերցվել է 9,1 մլն խմ ոռոգման ջուր, քանի որ այս տարի ջրապահովման առումով լավ տարի էր՝ տեղումները շատ էին, ջրամբարները՝ լցված: Այս մասին երեկ լրագրողներին ասաց ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Անդրանիկ Անդրեասյանը: Նա նշեց, որ ներկայումս Սեւանի մակարդակը գերազանցել է 1901 մ նիշը, ինչը մոտ է 1960-ականների ցուցանիշին, եւ հետագայում էլ փորձելու են քիչ ջուր վերցնել Սեւանից: Կոմիտեի նախագահն ընդգծեց նաեւ, որ ոռոգման ջրի դիմաց վարձավճարների հավաքման ցուցանիշն անցյալ տարի հասել է 80 տոկոսի: Խոսելով Սեւանի համար կարեւոր նշանակություն ունեցող Արփա-Սեւան թունելի վթարային հատվածների վերականգնման ծրագրի մասին, Անդրանիկ Անդրեասյանը տեղեկացրեց նաեւ, որ վերականգնման 5 տարվա ծրագրի իրականացման վերաբերյալ հաջորդ ամիս կհայտարարվի մրցույթ, եւ աշխատանքները կսկսվեն:**

**Երեւանում խմելու ջրի տեւողության վերաբերյալ ցուցանիշների մասին, ջրտնկոմիտեի նախագահը հայտնեց, որ վերջնական արդյունքները պարզ կլինեն հուլիսին, իսկ 22-ժամյա միջին ջրամատակարարման տեւողության ցուցանիշը ջրամատակարարման ցանցի տարբեր հանգույցներում տեղադրած 72 լոգերների մայիս ամսին արձանագրված ցուցանիշն է: Այս մասին Անդրանիկ Անդրեասյանն ասաց՝ պատասխանելով «Ազգի» հարցին, թե որքա՞ն են լոգերներն արտացոլում Երեւան քաղաքում ջրամատակարարման միջին տեւողության իրական պատկերը: Նա նաեւ փաստեց, որ ամռան սկսվելուն պես ջրամատակարարման տեւողության ցուցանիշները վատացել են, ինչը կապված է ոռոգման նպատակով խմելու ջրի օգտագործման հետ:**

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 21/06/2010 21:03 Page 1





# Արկածախնդրության պատասխան հարվածը կհասցվի անհապաղ

Կամա թե ակամա՝ անցած շաբաթը շատ սրընթաց դուրս եկավ Հայաստանի համար, քանի որ մի շարք ներքին եւ արտաքին գործընթացներ զուգահեռվեցին: Իսկ արդեն այս շաբաթվա սկզբին Հայաստանի քաղաքական ուղեղները, դեմքի խորիմաստ արտահայտություններով, փորձում են եզրահանգումներ անել, թե Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ սանկտպետերբուրգյան եռակողմ հանդիպումն ու հունիսյան ադրբեջանական սադրանքը Ղարաբաղում կապվա՞ծ են միմյանց հետ, թե՞ ոչ, արդյո՞ք մշակված գործողությամբ ադրբեջանցիները ուզում են խանգարել բանակցային գործընթացը Մինսկի խմբի շրջանակում («Կովկաս» ինստիտուտի փոխտնօրեն Սերգեյ Մինասյան), թե՞ Սանկտ Պետերբուրգում ընթացող հանդիպման արդյունքներից բարկացած՝ Ալիեւը փորձում է մկաններ ցույց տալ, տեղի ունեցածը կենտ սադրա՞նք է, թե՞ կարող է շարունակական լինել, Ադրբեջանը մայնդորֆյան հռչակագի՞ր է խախտել, թե սովորական շանտաժով է զբաղված (Ստեփան Սաֆարյան), Հայաստանը պետք է բանակցային գործընթացից դուրս գա՞, թե՞ ոչ, դուրս գա՞լն է բխում Հայաստանի շահերից, թե՞ առայժմ մնալը... Մասնավորապես՝ Ստեփան Սաֆարյանը համոզված է, թե Ադրբեջանն այսպիսով ստուգում է հայկական կողմի եւ միջազգային հանրության արձագանքը, այնպես որ կոշտ արձագանք է պետք, մինչդեռ աշխարհը, եւ առաջին հերթին՝ Ռուսաստանը, աշխարհաքաղաքական սպասելիքներ ունեն Բաքվից եւ այդպես չեն վարվի:



Առաջին արձագանքը հենց Հայաստանի նախագահն էր արել դեռ Սանկտ Պետերբուրգում, հայ լրագրողներին ասելով. «Սադրանքներն անընդունելի են միշտ, բայց հատկապես այս գործողությունն է անընդունելի, որը տեղի է ունեցել ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի նախաձեռնությամբ կազմակերպված բանակցություններից ժամեր անց», ասել նա՝ հավելելով, որ համանախագահ երկրները մտածելու բան ունեն եւ որ՝ հենց անպատիժ մնացած ռազմատենչ հայտարարություններն են հանգեցնում այս տեսակ կամ ավելի վատ հետեւանքների: Համանախագահները լռում են դեռ: Բանակցությունների ընթացքը շեղելու մասին դեռ ոչ մի խոսք: Բայց որ երկրիդ արտգործնախարարն է ասում, թե բարձր մակարդակով յուրաքանչյուր հանդիպումից առաջ Բաքուն միշտ փորձել է տապալել բանակցությունները սադրիչ հայտարարություններով, իսկ եռակողմ հանդիպումից հետո ակնհայտ սադրանքի գնաց՝ ցույց է տալիս, որ մերոնք անհրաժեշտ են համարում բանակցային գործընթացը ձախողելու Բաքվի իրական դեմքի բացահայտումը: Բայց... մերոնք դեռ սպասում են Մեդվեդեւի ու համանախագահների գնահատականներին, հո սովորական միջադեպ չէր:

Մյուս կողմից էլ՝ վերջին երկու օրը ավելի բարձրաձայն է հնչում հարցը՝ արդյոք Ադրբեջանը դո՞ւրս է գալիս խաղաղ բանակցություններից եւ հակվում դեպի զինադադարի խախտում, թե՞ միայն բանակցություն է ձախողում: Արդյո՞ք Հայաստանն էլ պետք է ձեւ անի, թե դուրս է գալիս բանակցություններից. իրականում, սակայն, պետություններից ոչ մեկը դա ինքնուրույն չի կարող անել՝ ֆորմատ կա, բան կա...

«Ադրբեջանի դիրքորոշումն այն է, որ Հայաստանին պարտադրեն ընդունել մադրիդյան նորացված սկզբունքները, բայց Սանկտ Պետերբուրգում հնչած հայտարարություններից երեւում է, որ ճշտել են նախկինում եղած բոլոր համաձայնությունները եւ կողմերին առաջարկել են բանակցությունները շարունակել այդ համաձայնություններից», նկատել է ղարաբաղցի փորձագետ **Մանվել Սարգսյանը** երեկ՝ հավելելով, որ Ադրբեջանը որոշեց ատամներ ցույց տալ միջնորդներին, մինչդեռ միջազգային հարաբերություններում շանտաժ չեն սիրում, մեկ-մեկ էլ դրա համար շատ դաժանորեն պատժում են: ԱԺ փոխխոսնակ Ս. Նիկոյանն իր գնահատականներում ավելի առաջ է գնացել՝ թե իր գործողություններով Ադրբեջանը վիրավորանք է հասցրել ռուսական կողմին եւ անձամբ՝ Դմիտրի Մեդվեդեւին, եւ որ բանակցությունները շարունակելն այլեւս իմաստ չունի: Եթե այս տեսակետով փորձ է արվում ռուսական արձագանք կորզել, ապա դա չաշխատեց՝ ռուսական կողմը Նեստերենկոյի շուրթերով խոստանում, բայց չի շտապում արձագանքել՝ սեփական շահերն առավել կարեւոր են...

Ամբողջ խնդիրն այն է, թե որ վարկածով ես դիտարկում ադրբեջանական սադրանքը. եթե դա բարձր մակարդակով կազմակերպված սադրանք է, ապա վերը նշվածն ամբողջությամբ իր տեղում է, իսկ եթե ու հանկարծ սա սադրանքի իմիտացիա է, ասինքն՝ սադրանք ցույց տալու սադրանք, հայկական կողմի կոշտ հայտարարություններ կորզելու համար, որին ի պատասխան ադրբեջանցիք եւս կկոշտանան ու բանակցությունները կխաթարվեն, այդ ուրիշ բան է արդեն:

Բոլոր դեպքերում Հայաստանին պատերազմով վախեցնելու եւ զիջումներ կորզելու տարբերակը եւս գոյության իրավունք ունի, եւ չգիտենք էլ բուն խնդիրը՝ ինչի՞ց է խռովել Ալիեւը, կամ ի՞նչ են խոսել երեք նախագահները բուն բանակցային գործընթացի վերաբերյալ, ինչ են տվել-առել համանախագահների հետ: Գիտենք միայն, որ սկսված երկխոսությունը շարունակելու պատրաստակամություն են հայտնել կողմերը, բայց ի՞նչ նյութի շուրջը, չգիտենք: Հանրահայտն այն է, որ եռանախագահներ-Ադրբեջանի պատվիրակություն հանդիպումից հետո Ալիեւի օրակարգը փոխվել է՝ նա չի մնացել ֆորումին եւ վերադարձել է:

Ընդհանուր առմամբ, եթե մի գծի վրա շարենք Ադրբեջանի ռազմական դոկտրինի ընդունումը՝ ռազմական լուծումը չբացառող, վերջին դիվերսիան, դիվերսիայի օրը Ադրբեջանի խորհրդարանում ընդունված այն օրենքը, որով այդ երկրի սահմանադրական դատարանն իրավունք է ստանում ռազմական դրություն հայտարարելու ժամանակ հետաձգել ընտրությունները (խորհրդարանական ընտրություններն Ադրբեջանում նոյեմբերի սկզբին են), ապա կարող է եւ այս բոլոր նախընտրական տրամաբանության մեջ տեղավորվել. քանի որ Ալիեւը չի կարող ընդունել բանակցությունների տրամաբանական հանգուցալուծման մի այնպիսի վիճակ, որը տոտալիզմի եւ նրան ոչնչացնելու առիթ կտա նրա քաղաքական հակառակորդներին՝ մարդը երկու քարի արանքում է, հո չի՞ կարող խոստովանել, որ բանակցություններում ցանկալի արդյունքի չի հասել, իսկ պատերազմի տարբերակով սեփական ավերված դիմագիծը հետ բերելը նրան կարող է շատ հարմար թվալ, միայն թե իր հոր փորձառությունը չունենալով՝ չի հասկանում, որ ամեն ինչ կկորցնի: Հայաստանը համարժեք պատասխանը երբեք չի ուշացնի. Հայաստանի պաշտպանության նախարարության ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն **Հայկ Քոթանջյանը** երեկ զգուշացրել է Ալիեւին, որ լեգիտիմ ինքնորոշված Ղարաբաղում նոր պատերազմ հրահրելու երկրորդ արկածախնդրությանը պատասխան հարվածը կհասցվի անհապաղ, ողջ ուժով:

Այս խիտ գործընթացների մեջ երկու կարեւոր ներքին իրադարձություն եւս կային Հայաստանում, որոնք հեռագնա ազդեր են գցելու ապագա գործընթացների վրա: Օտարալեզու դպրոցների թեման զարգանում է, եւ եթե անգամ առաջին ընթերցմամբ օրենսդրական փաթեթը ընդունվի՝ նրա մեջ դրած ականը տեղափոխվելու է աշուն՝ երկրորդ ընթերցման շուրջը պայթելու, սա կարող է անգամ ներքաղաքական խմորումների պատճառ դառնալ՝ քաղաքական մրցակցության թեմաներից մեկը դառնալու իմաստով: Ական ասացի՝ հիշեցի, այս շաբաթ ՀՀՇ-ն ական էր հայտնաբերել իր ներսում, ոչ ավել, ոչ պակաս՝ ՀՀՇ փոխնախագահ Խաչատուր Քոքոբելյանը, որը ոչ պաշտոնական տեղեկություններով, իբր, իշխանական ական է եղել ՀՀՇ-ի մեջ: Ական, թե ոչ՝ չգիտենք, բայց Քոքոբելյանը, եւ նրանից էլ հետո ՀՀՇ վարչության նախագահ Արարատ Զուրաբյանը հրաժարական տվեցին, ՀՀՇ-ում սկսված խմորումները կարծես նոր թափ են հավաքում: Իսկ խմորումների իմաստն այն է, որ ինչպես յուրաքանչյուր կուսակցությունում, քաղաքական հնաբնակ ՀՀՇ-ն իր զրոյական ռեյտինգով ու մի խումբ ինտելեկտուալների առկայությամբ ի վերջո պիտի գար էվոլյուցիայի տրամաբանական փուլի՝ վերակազմավորվեր: Դա դեռ չի եղել, եւ հավանաբար նրա արմատական թեւը մտադիր է աջ ազատական մի նոր միավոր ստեղծել, որի շուրջն աջ ուժեր կհամախմբվեն, եւ որը չի կոչվի պատեհական՝ ՀՀՇ անունով: Այսպես թե այնպես՝ ՀԱԿ-ին, որի կազմում է ՀՀՇ-ն, սպասում է պառակտում, համենայն դեպս Սեֆիլյանի «Սարդարապատը» նրա կազմից դուրս եկավ: Դե, դեռ մինչեւ աշուն այդպիսի շատ գործընթացներ տեղի կունենան, եթե հանկարծ ու չսպասված սահմանային սադրանքի նոր դրսեւորումներ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՉԱՅԼՈՒ

# Սադրանք՝ խոչընդոտելու բանակցությունները

1-ին էջից

## Ադրբեջանին չսաստելու հետեւանքները

Հունիսի 17-ին Սանկտ Պետերբուրգում Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների եռակողմ հանդիպմանը հետեւած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ քննարկումից հետո Ադրբեջանի «հավերժ» նախագահ Իլհամ Ալիեւը հապշտապ վերադարձավ Բաքու: Տարբեր տեղեկություններով, ամենայն դժկամությամբ Պետերբուրգ մեկնած Ալիեւի դժգոհությունը չպակասեց նաեւ պետերբուրգյան հանդիպումներից հետո: Ամեն դեպքում, նախագահների եռակողմ հանդիպմանը հետեւած հունիսի 18-ի լույս 19-ի գիշերը Չայլու գյուղի մոտ տեղի ունեցած ադրբեջանական հարձակումը չէր կարող հերթական «ստուգայցի» նման մի բան լինել:

«Ադրբեջանի զինված ուժերը գործողություններ են նախաձեռնել եւ փորձել ներթափանցել Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի դիրքեր: Պաշտպանության բանակի հակազդեցության արդյունքում ադրբեջանցիների մտադրությունները, բնականաբար, ձախողվել են: Նրանք հանցագործության վայրում թողնելով զոհ եւ կրելով կորուստներ՝ հետ են քաշվել իրենց դիրքեր: Ցավոք, կորուստներ ենք ունեցել նաեւ մենք, եւ ես ցավակցություններ եմ հայտնում մեր զոհված չորս զինվորների ընտանիքներին, նրանց բարեկամներին եւ հարազատներին», դեռեւս Պետերբուրգում այսպիսի հայտարարություն արեց Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանը** ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ Ս.Պետերբուրգի համալսարանում կարճատեւ առանձնազրույցից հետո՝ անդրադառնալով Ադրբեջանի եւ ԼՂՀ պաշտպանության բանակի շփման գծում ադրբեջանական զինուժի վերջին սադրանքին:

Պաշտոնական լրահոսի համաձայն, Սարգսյանն ասել է. «Այս տմարդի գործողությունը հատկապես անընդունելի է, որովհետեւ տեղի ունեցավ ՌԴ նախագահի նախաձեռնությամբ անցկացված եռակողմ հանդիպումից ժամեր անց: Այս փաստը մեկ անգամ եւս խոսում է այն մասին, որ համանախագահները, ներգրավված երկրները մտածելու բան ունեն»: Ըստ նախագահի, ռազմատենչ հայտարարությունները, «սադրանքները մնալով անպատիժ, չեմ ասում՝ անպատասխան, միշտ կարող են հանգեցնել այսպիսի կամ շատ ավելի վատ հետեւանքների: Ես համարում եմ, որ այսպիսի վերաբերմունքը անհարգալից վերաբերմունք էր նաեւ համանախագահների նկատմամբ»:

Հայաստանի նախագահը վերահաստատել է հայկական կողմի դիրքորոշումը բանակցություններում. «Մենք մեր նպատակից երբեւէ չենք շեղվել, որպեսզի պատճառաբանելով ադրբեջանցիների այսպիսի գործողությունները՝ ինչ-որ բան վերանայենք: Մենք հաստատակամ ենք, եւ ես վստահ եմ, որ մենք հասնելու ենք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչմանը»:

Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանն**, իր հերթին, անդրադառնալով Մարտակերտի ուղղությամբ ադրբեջանական դիվերսիոն հարձակման փորձի տեղեկությանը, նշել է. «Բարձր մակարդակով յուրաքանչյուր հանդիպումից առաջ Բաքուն փորձում էր սադրիչ հայտարարությունների, պատերազմի սպառնալիքների միջոցով տապալել բանակցությունները: Ամենայն հավանականությամբ, տեսնելով, որ դա իրենց չի հաջողվում, ադրբեջանցիներն այս անգամ, հունիսի 17-ի եռակողմ բարձր մակարդակի հանդիպումից անմիջապես հետո գնացին ավելի հեռու՝ ակնհայտ սադրանքի»: Նալբանդյանի խոսքերով, կարելի է ասել, որ դեռեւս չհասցնելով դուրս գալ բանակցությունների սրահից, ադրբեջանական ղեկավարությունը կազմակերպել է դիվերսիոն գործողություն: «Գիշերվա քողի տակ ուխտադրուժ հարձակվելը բնորոշ է Ադրբեջանին: Դա առաջին անգամ չի արվում», ասել է Նալբանդյանը:

ԼՂՀ պաշտպանության բանակից ստացված տեղեկությունների համաձայն, հունիսի 18-ին՝ ժամը 23.30-ի սահմաններում, Չայլու գյուղի մերձակայքում Ադրբեջանից ԼՂՀ տարածք է ներխուժել զինված հետախուզական խմբավորում: Սահմանն անցած ադրբեջանցիներին հաջողվել է թափանցել ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գոտու հյուսիսարեւելյան հատված: Զինված խմբավորումն առճակատվել է դիրքապահներին: Տեղի է ունեցել դիմահար մերձամարտ: Հայկական կողմի ձեռնարկած միջոցառումներով հակառակորդի առաջխաղացումը կասեցվել է: Թողնելով մեկ դիակ եւ զինամթերք՝ թշնամին հետ է քաշվել: Հայկական կողմը տվել է չորս զոհ, չորս վիրավոր:

## Ադրբեջանական տարբերակ

Ադրբեջանում իրենց կարգավիճակով լուրջ ու ծանրակշիռ համարվող պաշտոնյաները վերջերս ինչ իրադարձություն էլ լինի, լուռ ու աներեւույթ մնալու հատկություն են ձեռք բերել, իսկ Ադրբեջանի արտաքին գերատեսչության պաշտոնական ներկայացուցիչ Էլխան Պոլուխովը հանդես է գալիս համ նախագահի, համ ԱԳՆ ղեկավարի անունից: Ադրբեջանում կարծես ներկայացուցչական ճգնաժամ է...

Ինչեւէ, Պոլուխովը հայտարարել է, թե ղարաբաղյան հակամարտությունը «զինված» է, այլ ոչ սառեցված: «Այսպիսի բախումները ցույց են տալիս, որ Ադրբեջանը երբեք չի հաշտվի իր տարածքների օկուպացման հետ», ասել է Ադրբեջանի քաղաքական միակ «մեկնաբանը»:

Նախնական հայտարարությունների համաձայն, բախման վայրում մնացել էր մեկ ադրբեջանցի զինվորի դիակ: Սակայն երեկ ադրբեջանական լրատվամիջոցները «տեղեկացրին», թե իբր հայկական կողմից «կրկին խախտվել է հրադադարը»: Ըստ ադրբեջանցիների, հունիսի 21-ին, ժ. 00:45-ին Ֆիզուլիի շրջանում կրակոցներ են հնչել: «Փոխհրաձգության հետեւանքով զոհվել է մեկ ադրբեջանցի զինծառայող», ասվում է Ադրբեջանի ՊՆ հայտարարության մեջ:

Ղարաբաղի պաշտպանության նախարարության մամուլի ծառայության համաձայն, Ադրբեջանից հունիսի 20-ի լույս 21-ի գիշերը եւ օրվա ընթացքում տարբեր տրամաչափի հրաձգային զենքերով եւ դիպուկահար հրացաններով գնդակոծվել են Հորադիզ, Աշաղը Վեյսալի, Կուրոպատկինո, Յուսուֆջանլու, Չեյիլ լեռ, Քենգեռլի, Բաշ Քարվենդ, Շիխլար, Սեյսուլան եւ Լեւոնարխ ուղղություններում տեղակայված ղարաբաղյան դիրքապահների հենակետերը: Իսկ ադրբեջանական հայտարարությունները, թե այս անգամ էլ «հայերը կորուստներ են կրել», «Ազատության» փոխանցմամբ եւ Ղարաբաղի պաշտպանության նախարարության խոսնակ Սենոր Հասրաթյանի վկայությամբ, չեն համապատասխանում իրականությանը:

## ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արմենական-ՌԱԿ վարչությունը, Հայաստանի Թեքեյան մշակութային միության վարչությունը եւ «Ազգ» օրաթերթի խմբագրությունը խոր ցավակցություններ են հայտնում Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ պրն Պերճ Սեդրակյանին իր սիրելի հոր՝
**Հմայակ Սեդրակյանի** (Մոնրեալ)
մահվան կապակցությամբ:

AZG NEW PDF.qxd 21/06/2010 21:04 Page 1



# Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի 300-ամյակին նվիրված տոնախմբություններ

Հունիսի 19-ին, Սանկտ Պետերբուրգում հայ համայնքի հաստատման 300-ամյակի տոնախմբությունների շրջանակներում, Սանկտ Պետերբուրգի Սալտիկով-Շչեդրինի անվան ազգային գրադարանում, Սանկտ Պետերբուրգի Հայ առաքելական եկեղեցու, Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոսության եւ Հայ ազգային մշակութային ինքնավարության ջանքերով տեղի ունեցավ հայկական ձեռագրերի եւ հին տպագիր գրքերի ցուցադրության բացումը:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, ՀՀ փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը, արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը, ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը, սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Հակոբյանը, Սանկտ Պետերբուրգի Հայ ազգային մշակութային ինքնավարության խորհրդի նախագահ Կարեն Մկրտչյանը եւ այլք:





Բացման խոսքով հանդես եկավ Սալտիկով-Շչեդրինի անվան ազգային գրադարանի տնօրենի պաշտոնակատար Անտոն Լիխոմանովը: Նա, ողջունելով ՀՀ նախագահի այցը, ներկաներին շնորհավորական խոսք հղեց հայ համայնքի հաստասման 300-ամյակի առթիվ, ապա պատմեց գրքերի հայկական հավաքածուի ստեղծման, Սանկտ Պետերբուրգում նախորդ երեք դարերի ընթացքում գործած հայկական տպագրատների եւ լույս տեսած հայալեզու պարբերականների մասին: Նաեւ ներկաներին տեղեկացրեց, որ արդեն պատրաստ է հայալեզու գրքերի էլեկտրոնային քարտարանը:

Ազգային գրադարանում պահպանվում են 100-ից ավելի հայերեն ձեռագրեր եւ մոտ 64 000 տպագիր գրքեր, ամսագրեր եւ քարտեզներ: Այստեղ պահպանվող ամենահին ձեռագիրը՝ Քառավետարանի հատվածը, վերագրվում է 11-12-րդ դարերին:

Այնուհետեւ հայ համայնքի ներկայացուցիչներն ու հյուրերը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի գլխավորությամբ այցելեցին Սանկտ Պետերբուրգի պետական համալսարան: Համալսարանի ռեկտոր **Նիկոլայ Կրոպաչյովը** ներկաներին պատմեց համալսարանի կայացման գործում հայ գիտնականների ունեցած մեծ ներդրման մասին:

Հանդիպման ընթացքում Երեւանի եւ Սանկտ Պետերբուրգի պետհամալսարանների միջեւ ստորագրվեց համագործակցության ծրագիր, ինչպես նաեւ համալսարանի ականավոր գիտնականների դիմանկարների սրահում կատարվեց Վիկտոր Համբարձումյանի եւ Արմեն Թախտաջյանի դիմանկարների բացման արարողությունը: Բարձրաստիճան հյուրերը եղան նաեւ Հովսեփ Օրբելու առաջիկայում կառուցվելիք հուշարձանի հիմնաքարի մոտ:

Սանկտ Պետերբուրգի պետհամալսարան կատարած այցից հետո ՀՀ նախագահն այցելեց Սբ Կատարինե եկեղեցի: Եկեղեցու մուտքի առջեւ նախագահին դիմավորեցին առաջնորդ սրբազան հայրը, համայնքի ներկայացուցիչներ ու բազում հյուրեր: Եկեղեցում գոհաբանական աղոթք վերառաքելուց հետո **Եզրաս սրբազանը** նախագահ Սարգսյանին ներկայացրեց եկեղեցու եւ եկեղեցապատկան շինությունների վերանորոգման, համայնքային կառույցների գործունեությունը եւ առաջիկա ծրագրերը:

## *Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի 300-ամյակի տոնախմբությունների շրջանակներում առաջնորդական օրհնության գրերի, ՀՀ պետական հուշամեդալների եւ պատվոգրերի հանձնում*

**Հունիսի 19-ին Ռուսաստանի Դաշնության հյուսիսային մայրաքաղաքում շարունակվեցին Սանկտ Պետերբուրգում հայ համայնքի 300-ամյա հոբելյանի առիթով կազմակերպված միջոցառումները: Այս անգամ համայնքի ներկայացուցիչները մեկտեղվել էին Սբ Կատարինե եկեղեցուն կից առաջնորդարանի հանդիսությունների դահլիճում՝ առաջնորդական օրհնության գրերի, պարգեւաբաշխության եւ պատվոգրերի հանձնման արարողությանը մասնակցելու համար:**



**Հանդիսությունը սկսվեց Ռուսահայոց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի աղոթքով եւ օրհնության խոսքով:**

**Առաջնորդ սրբազան հայրը օրհնության եւ գնահատանքի գրեր էր հղել Սբ Կատարինե եկեղեցուն կից առաջնորդարանի երկրորդ հարկի՝ մշակութային կենտրոնի սրահի, վերանորոգման աշխատանքներում առատաձեռն բարեգործությամբ մասնակցություն ցուցաբերած հայորդիներին՝ Կարեն Մկրտչյանին, Յուրի Սարգսյանին, Գագիկ Զախարյանին, Էդուարդ Գասպարյանին, Արմեն Մկրտչյանին, Իգոր Զավադովին, Ալեքսանդր Քոչարովին, Սամվել Մովսիսյանին, Միքայել Ֆիլիկյանին, Յուրի Բաբայանին եւ Նորայր Պողոսյանին:**

**Սրբազան հայրն իր խոսքում ասաց. «Ձեր Աստվածահաճո գործերը վկայությունն են Ձեր անկեղծ հավատքի, հայ ժողովրդի հոգեւոր արժեքների եւ սրբությունների նկատմամբ անմնացորդ նվիրումի»:**

**ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հայ ինքնության պահպանման գործում նշանակալից ավանդի, հասարակական բազմամյա ակտիվ գործունեության, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման, հայ-ռուսական բարեկամական կապերի ամրապնդմանը ցուցաբերած օժանդակության համար համայնքի ակնառու ներկայացուցիչներին հանձնեց մեդալներ եւ պատվոգրեր:**

**Այսպես՝ «ՀՀ սփյուռքի նախարարության ոսկե մեդալ»-ներով պարգեւատրվեցին Հայ առաքելական եկեղեցու հոգաբարձուների խորհրդի նախագահ Վյաչեսլավ Լազարյանը եւ հոգաբարձուների խորհրդի անդամ Յուրի Սարգսյանը: «Արշիլ Գորկի» մեդալով պարգեւատրվեց ՌԴ վաստակավոր նկարիչ, Սանկտ Պետերբուրգի նկարիչների միության վետերանների խորհրդի նախագահ Զաքար Խաչատրյանը: «Վիլյամ Սարոյան» մեդալով պարգեւատրվեց Սանկտ Պետերբուրգի Հայ առաքելական եկեղեցու «Հավատամք» թերթի գլխավոր խմբագիր, ՀՀ գրողների, ՀՀ լրագրողների եւ ՌԴ նկարիչների միությունների անդամ Արմեն Մեռուժանյանը:**

**Ինչպես նաեւ ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգրեր հանձնվեցին համայնքի 21 ներկայացուցիչների:**

**ՀՀ սփյուռքի նախարարը, կարեւորելով եւ գնահատելով համայնքի պատմական դերակատարությունը, ի մասնավորի իր խոսքում ասաց. «Սանկտ Պետերբուրգի հայ համայնքն այն կամուրջն է եղել, որ 300 տարի շարունակ կամրջում է հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամությունը»:**

**Ռուսաստանի հայերի միության անունից շնորհավորական խոսք ասաց Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի հոգաբարձուների խորհրդի փոխատենապետ Գեորգի Տեր-Ղազարյանցը: Նա միության անունից հուշամեդալներ հանձնեց Սանկտ Պետերբուրգի եւ հյուսիսարեւմտյան տարածաշրջանի հայ համայնքի հոգեւոր հովիվ Տ. Նշան աբեղա Պետրոսյանին, Սանկտ Պետերբուրգի Հայ ազգային մշակութային ինքնավարության խորհրդի նախագահ Կարեն Մկրտչյանին եւ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին:**

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

# Վազրիկ Բազիլը ճառագիրների միության նախագահ

**Գերմանախոս երկրների ճառագիրների միության նոր նախագահ է ընտրվել Վազրիկ Բազիլը: Մայնի Ֆրանկֆուրտում կայացած դաշնային ժողովում միության 40 անդամները միաձայն պաշտպանել են բեռլինաբնակ մեր հայրենակցի թեկնածությունը: «Ազգի» ընթերցողներին ծանոթ Վազրիկ Բազիլը հանրային հաղորդակցության խորհրդատու է: Նա ճառագիրների միության 12-ամյա պատմության երրորդ նախագահն է: Միությունը հիմնադրվել է 1998-ին Բոննում: 460 ճառագիր եւ հեղինակ են անդամակցում միությանը Գերմանիայից, Ավստրիայից եւ Շվեյցարիայից:**

**Վազրիկ Բազիլը ծնվել է 1966-ին Մյունխենում: Տարրական կրթությունը ստացել է Թեհրանի Քուշեշ դպրոցում: 1981-85-ին հաճախել է Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարան: 1985-1987-ին իմաստասիրություն է ուսանել Հռոմի Պապական Գրիգորյան համալսարանում, 1987-1989-ին՝ իմաստասիրություն եւ աստվածաբանություն սովորել Մյունխենի Հիսուսյանների համալսարանում, իսկ 1990-95-ին՝ իմաստասիրություն, աստվածաբանություն եւ գրականություն ուսումնասիրել Մյունխենի պետական համալսարանում, ավարտել է նաեւ Գովազդի եւ մարկետինգի բավարական ակադեմիան: 1995-98-ին Քյոլնի Գերմանահայոց առաջնորդարանի դիվանապետի պաշտոնն է կատարել, 1998-2003-ին գործավարի պարտականություններ կատարել Վիթթենբերգի «Մեսրոպ» հայագիտական կենտրոնում, 2003-2005-ին, ինչպես նաեւ այժմ ռեֆերենտի պաշտոնն է կատարում գերմանական Բունդեսթագում: Գերմաներեն մի շարք մասնագիտական գրքերի հեղինակ է: Հայերեն բանաստեղծությունները տպագրվել են «Գրական թերթ»-ում, Վենետիկի «Հայ ընտանիք» եւ Փարիզի «Յառաջ» եւ «Կայք» թերթերում, ինչպես նաեւ Երեւանում լույս տեսած «Սփյուռքահայ գրականություն» հատորում: 2009-ին Անթիլիասում «Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակի» մատենաշարով լույս է տեսել նրա բանաստեղծությունների «Առօրյան» առաջին հատորը:**

**Բեռլինում ՀՀ դեսպան Արմեն Մարտիրոսյանը ջերմորեն շնորհավորել է Վազրիկ Բազիլին՝ նրան փոխանցելով ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի շնորհավորագիրը: «Մեզ համար հպարտություն է, որ Գերմանիայում ունենք հայրենակից, որը ոչ միայն հրապարակային գործիչ է, այլեւ բազմաթիվ հրապարակախոսությունների ու գրքերի հեղինակ: Հուսով եմ, որ Ձեզ համար նոր հորիզոններ են բացվել Ձեր ընտրած մասնագիտությունն առավել տարածելու, նաեւ Հայաստանում մի շարք դասախոսություններ կազմակերպելու համար», համագործակցելու առաջարկով է եզրափակել իր ողջույնի խոսքը սփյուռքի նախարարը:**

**Վազրիկ Բազիլի հետ մեր հարցազրույցը՝ «Ազգի» առաջիկա համարներում:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# «Հայաստան-2010. Անցյալի գործողություններ, հետագայի հնարավորություններ»

Այս թեմայով միջազգային սեմինար-գիտաժողով է կազմակերպում Իրանի արտգործնախարարության քաղաքական եւ միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտի Կենտրոնական Ասիայի եւ կովկասյան ուսումնասիրությունների կենտրոնը Թեհրանի Կովկասյան ուսումնասիրությունների ինստիտուտի համագործակցությամբ: Գիտաժողովը, որն անցկացվելու է Թեհրանի համալսարանում օգոստոսի 3-4-ը, քննարկելու է ինչպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության, այնպես էլ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման, երկաթուղային տրանսպորտի, էներգիայի եւ անվտանգության խնդիրները: Մասնակցելու են եւ զեկուցումներ են կարդալու Թուրքիայից, Հայաստանից, Ադրբեջանից, Ռուսաստանից եւ Եվրոմիությունից հրավիրված մասնագետներ: Կազմակերպիչ գիտական հանձնախմբում ընդգրկված են նախկին արտգործնախարարներ Ալի Աքբար Վելայեթին, Քամալ Խարազին, Հայաստանում Իրանի նախկին դեսպան Մոհամմեդ Ֆարհադ Քոլեյնին, Իրանում Հայաստանի դեսպան Գրիգոր Առաքելյանը, Հայաստանում Իրանի ներկա դեսպան Սայեդ Ալի Սաղայիանը եւ ուրիշներ: Զեկուցումների ամփոփագրերը (մինչեւ 300 բառ) ներկայացնելու վերջնաժամկետն է հուլիսի 11-ը, ամբողջական զեկուցումներինը՝ օգոստոսի 1-ը: Մանրամասնությունների համար այցելել info@caucasus.ir, conference-cis@ipis.ir կայքերը:

Հ. Ծ.

AZG NEW PDF.qxd 21/06/2010 21:04 Page 1



# Նույնիսկ հրեաներն են անակնկալի եկել թուրքի էությունից

«Ազատության նավատորմիղի» հետ կապված սկանդալային իրադարձությունները ռուսաստանյան լրատվամիջոցներում երկակի արձագանք գտան: Եթե ռուս ազգայնական մամուլը միջադեպը գնահատեց որպես հրեաների հերթական «համաշխարհային» լկտիություն, ապա, մյուս կողմից, լիբերալ մամուլը որակեց իբրեւ բացահայտ թուրքական պրովոկացիա: Հատկապես ընդգծվում էր, որ մերձավորարեւելյան արդեն վեց տասնամյակ շարունակվող կոնֆլիկտի ընթացքում միջադեպեր շատ են եղել, երբ զոհվել են անհամեմատ ավելի մեծ թվով մարդիկ, սակայն այս վերջին պատմության մեջ հառնում է միանգամայն նոր գործոն՝ Թուրքիայի ագրեսիվ ու ռազմատենչ ներկայությունը:

Իսրայելցիները միշտ էլ (մինչ այդ եղել է ինը մարդասիրական բեռնափոխադրում) շրջափակել են նավերը եւ դրանք ուղղել Աշդոդ նավահանգիստ, որտեղից էլ, զինազննություն անցկացնելուց հետո, թույլատրել են բեռները Գազա հասցնել ցամաքով: Ըստ իսրայելական աղբյուրների, «մարդասերների» առջեւ խնդիր է դրված եղել չկիրառել հրազեն, այլ մեխանիկական միջոցներով հասցնել մահացու հարվածներ, ինչը չէր կարող անպատասխան մնալ հրեա ծովային պարեկների կողմից: Արդյունքն ակներեւ է՝ Իսրայելի «անմարդկային» գործողությունները դատապարտեցին մուսուլմանական աշխարհը, Եվրոմիությունը, Չինաստանը, Ռուսաստանը: Նույնիսկ Իսրայելի ավանդական (հրեաների կողմից հարկադրված) դաշնակից ԱՄՆ-ը եւս «դիտողություն» արեց իր սանիկին:

Չզբաղվենք մեղավորի փնտրումներով: Ավելի լավ է ուշադրության առնենք, թե ինչպես է Ռուսաստանը նայում Թուրքիայի հավակնոտ կեցվածքին, թուրք-իսրայելական անհարիրություններին: Այստեղ էլ ենք տեսնում, որ Թուրքիան անթաքույց ձգտում էր մուսուլմանական աշխարհի լիդերի դերին Մերձավոր Արեւելքում, Կովկասում, Միջին Ասիայում, Բալկաններում: Սակայն այստեղ բացառում են, թե թուրքը կարող է գերիշխող տարր դառնալ, այսպես ասած, արաբալեզու եւ պարսկալեզու ժողովուրդների շրջանում: Նույնիսկ Միջին Ասիայի թուրքալեզու երկրները կրիտիկական պահերին գերադասում են դիմել աշխարհի առավել հզոր երկրներին: Ռուսական մամուլը ինչ-որ տեղ սարկազմով ընդունեց «հնամյա» թուրքական հողում մարտնչող մուսուլման ղրղզների եւ ուզբեկների՝ Մոսկվային ուղղված օգնության խնդրանքը: Պաղեստինցի արաբներին կարող են դուր գալ Էրդողանի հակաիսրայելական նկրտումները, «մարդասիրական» գործողությունները, բայց նրանց համար էլ Անկարան երբեք չի փոխարինի Մոսկվային:

Դրա հետ մեկտեղ ռուսները, աննախադեպ զարգացնելով տնտեսական հարաբերությունները Թուրքիայի հետ եւ նրան դարձնելով իրենց կարեւորագույն էներգետիկ գործընկերներից մեկը, փաստորեն խրախուսում են վերջինիս արտաքին քաղաքական վերակողմնորոշման կուրսը: Ինչու չէ, եթե Թուրքիան հուսախաբություն է ապրում թուրք-ամերիկյան-իսրայելական համագործակցությունից: Երբ Եվրոպան նրա առաջ չի բացում իր դռները: Կամ ինչո՞ւ խլրտում չմտցնել ՆԱՏՕ-ի հարավային թեւում՝ պարբերաբար լիցք հաղորդելով Թուրքիայում ուժեղացող հակաարեւմտյան տրամադրություններին: Անկարայի թեւի տակ դրվող «հակաարեւմտյան» բարձը կարող է դանդաղ գործող ական դառնալ նրա համար:

Ռուսաստանյան մամուլի եւս մի դիտարկում-վարկած, որի իրագործումը արմատապես կշտապի նաեւ Հայաստանի շահերը: Եթե Թուրքիան, շարունակելով ընդառաջ գնալ Իսրայելի նկատմամբ համաիսլամական ատելությանը, ուժեղացնի ճնշումը Իսրայելի վրա, ապա հնարավոր է, որ վերջինս հարված հասցնի... Իրանին: Իսլամական առաջատար երկրների սպառնալիքներին դեմ հանդիման հրեական պետությունը կկանգնի երկընտրանքի առջեւ՝ հանձնվել կամ նախահարձակվել: Թուրքիան չունի միջուկային զենք, իսկ ահա Իրանը մոտ է դրա ստեղծմանը (եթե չի ստեղծել): Եվ հետո, եթե ռուսները, այնուամենայնիվ, Իրանին մատակարարեն 3PC-300 հակահրթիռային համակարգը ու այն տեղակայեն այդ երկրում, ապա Իսրայելի համար, որը չունի թեւավոր հրթիռներ, Իրանին օդային հարվածներ հասցնելը շատ բարդ խնդիր կդառնա. հարկ կլինի գործի դնել գրեթե ողջ ռազմաօդային ուժերը, ինչը հղի է մեծ կորուստներով՝ հիվանդագին մի հարց հրեաների համար:

Եվ վերջապես՝ բուն հրեաների մասին: Լինելով աշխարհի, թերեւս, ամենաբարդ ցեղը, նրանք, ըստ երեւույթին, անակնկալի են եկել թուրքի էությունից, թեեւ Թուրքիայում նրանք ունեցել են ամուր դիրքեր (հիշենք մեր ցեղասպանությունը) եւ շարունակում են ունենալ: Ահա եւ ռուսական թերթերից մեկը, քննարկելով թեման, մեջբերել էր ֆրանսիական «Le Monde»-ի հակաթուրքական մի հետեւություն. «Ամերիկյան հասարակական կարծիքում երեւան է գալիս լուրջ մի հակառակորդ, որը ձեւավորվում է հրեական եւ հայ համայնքների միաձուլումից: Էրդողանի ճիչերը ուժեղացնում են այդ միտումը հրեական կազմակերպություններում, որոնց ավելի մոտ են հայ գործընկերները»:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Լեհաստանի նախագահի անունը հայտնի կդառնա հուլիսի 4-ին

Լեհաստանում հունիսի 20-ին անցկացված նախագահական ընտրությունների առաջին փուլում թեկնածուներից ոչ մեկին չի հաջողվել ստանալ քվեների կեսից ավելին: Դա նշանակում է, որ հուլիսի 4-ին տեղի կունենա ընտրությունների երկրորդ փուլը, որին կմասնակցեն առաջին փուլում ամենաշատ քվեներ ստացած երկու թեկնածուները՝ նախագահի պաշտոնակատար Բրոնիսլավ Կոմորովսկին եւ ապրիլյան ավիավթարից զոհված նախագահ Լեխ Կաչինսկու եղբայր Յարոսլավ Կաչինսկին:

Բոլոր քվեաթերթիկների 94 տոկոսի հաշվառումից հետո պարզվել է, որ «Քաղաքացիական պլատֆորմ» կառավարող կուսակցության թեկնածու, խորհրդարանի նախագահ եւ հանրապետության նախագահի պաշտոնակատար Բրոնիսլավ Կոմորովսկին ստացել է քվեների 41,55 տոկոսը, իսկ «Իրավունք եւ արդարություն» կուսակցության առաջնորդ Յարոսլավ Կաչինսկին՝ 34,74 տոկոսը:

Քաղաքագետները Կոմորովսկուն համարում են չափավոր աջ գործիչ, իսկ Կաչինսկուն՝ ծայրահեղ աջ: Երկուսն էլ «Համերաշխություն» հակակոմունիստական արհմիության նախկին ակտիվիստներ են:

# Իսրայելը վերացրեց Գազայի ցամաքային շրջափակումը

Իսրայելի ռազմաքաղաքական կաբինետը որոշել է վերացնել Գազայի մատակարարումների վրա սահմանված արգելքը բոլոր ապրանքների համար, բացի զենքից եւ ռազմական նյութերից: Բեռնարգելքը վերացնելու որոշման վրա ըստ երեւույթին ազդել է «Ազատության նավատորմիղի» զավթումը դատապարտող համաշխարհային ընկերակցության ճնշումը:



Ընդունված փաստաթղթում նշվում է, որ Իսրայելի կառավարությունը «որոշել է հրապարակել այն ապրանքների ցանկը, որոնք չի կարելի մտցնել Գազայի հատված. ցանկը սահմանափակվում է զենքով եւ ռազմական նյութերով, ներառյալ երկակի նշանակության առարկաները»:

Գլխավոր նախարարությունների եւ ուժային գերատեսչությունների ղեկավարներին ընդգրկող կաբինետի որոշումը նշանակում է Իսրայելի հրաժարում երեք տարի տեւած պատժիչ քաղաքականությունից, երբ Գազայի հատվածը կարող էր օրինական կարգով ներմուծել միայն առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ շուրջ 150 ապրանքատեսակ:

«Երկակի նշանակության» ապրանքների թվին են դասվում շինանյութերը, որոնք անհրաժեշտ են հազարավոր ավերված տների եւ ենթակառույցի օբյեկտների վերականգնման համար: Սակայն Իսրայելը խոստացել է «թույլատրել եւ ընդլայնել» դրանց ներմուծումը Պաղեստինի վարչակազմի հաստատած եւ միջազգային վերահսկողության ներքո իրականացվող նախագծերի համար, նշում է ՌԻԱ գործակալությունը:

Որոշված է ավելացնել վերգետնյա անցումների թողունակությունը, որոնց միջոցով իրականացվում է Գազայի հատվածի մատակարարումը:

Իսրայելի իշխանություններն ընդգծում են, որ պատժամիջոցների մեղմացումը չի անդրադառնա «գոյություն ունեցող անվտանգության արարողակարգերի վրա»: Դրանց թվին են դասվում շարունակվող ծովային շրջափակումը եւ Գազայի հատվածին մոտեցող նավերը կալանելու սպառնալիքը:

Կթույլատրվի այն շինանյութերի մատակարարումը, որոնք նախատեսված են միջազգային հսկողության ներքո Գազայում տների, դպրոցների, հիվանդների եւ ենթակառույցի վերականգնման համար:



# «Գազպրոմը» սահմանափակեց գազի մատակարարումը Բելառուսին

**Հունիսի 21-ի առավոտյան «Գազպրոմը» 15 տոկոսով կրճատել է Բելառուսին մատակարարվող գազի ծավալները: Որոշված է կրճատումը հասցնել մինչեւ 85 տոկոսի: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը՝ վկայակոչելով «Գազպրոմի» վարչության նախագահ Ալեքսեյ Միլլերին: Այսպիսով կոնցեռնը կատարում է ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի կարգադրությունը, որն ավելի վաղ Մինսկից պահանջել էր վերադարձնել ներմուծված վառելիքի դիմաց գոյացած 200 մլն դոլար պարտքը:**



**Բելառուսական կողմին հնգօրյա ժամկետ էր տրվել ռուսական գազի հետ կապված հարցերի լուծման համար: «Ազգը» գրել է Մինսկին ներկայացված այդ վերջնագրի մասին, որի ժամկետն ավարտվեց հունիսի 21-ին: Ալեքսեյ Միլլերի խոսքերով, երկկողմ բանակցություններ վարվել են ընդհուպ երկուշաբթի առավոտ, բայց այդպես էլ փոխզիջում ձեռք չի բերվել:**

**ՌԻԱ գործակալության տվյալներով, բելառուսական պատվիրակությունը մնում է «Գազպրոմի» գրասենյակում. բանակցությունները շարունակվում են:**

**«Գազպրոմը» դժգոհ է, որ Մինսկը գազի դիմաց վճարում է անցյալ տարվա գնով՝ 150 դոլար 100 խմ-ի դիմաց: «Գազպրոմի» հաշվարկներով՝ 2010-ին Բելառուս առաքվող ռուսական գազի միջին գինը կարող է կազմել 187 դոլար 1000 խմ-ի դիմաց: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ հարեւան Ուկրաինայի համար ռուսական գազը մեկուկես անգամ ավելի թանկ է նստում:**

**Բելառուսը ռուսական գազը գնում է առանց մաքսատուրքի, միջին եվրոպականից 1/3-ով ցածր գնով: Վերջերս Մոսկվան եւ Մինսկը սակարկություն են սկսել ավտոմեքենաների եւ նավթի մաքսատուրքերի շուրջը: Դրանց պատճառով Ռուսաստան-Ղազախստան-Բելառուս մաքսային դաշինքի նախագիծը որոշված ժամկետներում այդպես էլ չիրականացավ:**

# Մոսկվան Բիշքեկից պահանջել էր պահպանել նախագահական կառավարումը

**Ղրղզստանի հարավում հունիսի 11-ին ծայր առած ազգամիջյան բախումների օրերին Ռուսաստանն առաջ քաշեց որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում ինքը կարող էր զորք ուղարկել Ղրղզստան: Խոսքը մասնավորապես այդ երկրի սահմանադրության նախագծի փոփոխման մասին էր, գրում է The New Times հանդեսը՝ վկայակոչելով Բիշքեկի անանուն «բարձրաստիճան պաշտոնական աղբյուր»:**

**Վերջինիս պնդմամբ, ռուսական կողմն առաջարկել էր չեղյալ հայտարարել հունիսի 27-ին նշանակված նոր սահմանադրության հանրաքվեն, ինչպես նաեւ փոփոխություն կատարել հիմնական օրենքի նախագծում՝ հրաժարվել կառավարման խորհրդարանական ձեւին անցնելուց եւ պահպանել նախագահական կառավարումը: Ղրղզստանի իշխանությունները հրաժարվել էին դա անել, ուստի Մոսկվան զորք չէր ուղարկել, պնդում է աղբյուրը:**

**Ղրղզստանի ղեկավարությունն առայժմ չի մեկնաբանել տվյալ հրապարակումը:**

**Օշի եւ Ջալալաբադի մարզերում ազգամիջյան բախումների օրերին Բիշքեկի ժամանակավոր կառավարությունը ռազմական օգնություն էր խնդրել Մոսկվայից, բայց մերժում էր ստացել: ՌԴ նախագահի մամլո քարտուղար Նատալյա Տիմակովան այն ժամանակ հայտարարել էր, թե «առայժմ հիմքեր չկան» Ղրղզստանի հակամարտության կարգավորմանն անմիջականորեն մասնակցելու համար:**

AZG NEW PDF.qxd 21/06/2010 21:51 Page 1



# «Ցեղերին բացատրել՝ ի՞նչ է նշանակում ազգային դպրոց»

Արվեստագետ **Վահան Արծրունու** շրջապատում չկա մեկը, որ կողմ կլինի կառավարության առաջարկած օրենսդրական նախաձեռնությանը՝ օտարալեզու դպրոցների բացման կապակցությամբ: Թեպետ իր շրջապատում շատերն են ռուսական կրթություն ստացել, բայց դեմ են օտարալեզու դպրոցներին եւ տարօրինակ են համարում, որ հայկական կրթություն ստացած մարդիկ փորձում են խարխլել հայոց լեզվի հիմքերը: «Այս խնդիրը դարձել է ազգային եւ առաջացնում է իսկայական տարաձայնություններ մտավորականության շրջանում: Համոզված եմ, որ անկիրթ մարդը չի կարող գիտակցել, որ հիմա փորձում են խարխլել պետական, ազգային մտածողության եւ ազգային նկարագրի ամենահիմնական գաղափարախոսությունը»:

Երգչուհի **Շուշան Պետրոսյանն** էլ դեմ լինելով օրինագծին՝ ընդգծում է, որ դպրոցների բացումը քաղքենիություն է: «Եթե դպրոցում նորմալ ուսուցում լինի, ապա օտար լեզու էլ կսովորեն, բայց ի՞նչ է նշանակում դպրոցում առարկաներն անցնել օտար լեզվով: Դա անընդունելի է: Կարծում եմ դրան դեմ կլինի նաեւ Սփյուռքը: Ամեն ջանք գործադրում են հայկական դպրոցը պահպանելու, հայոց լեզու, գրականություն ու պատմություն դասավանդելու համար, իսկ այստեղ օտարալեզու դպրոց են բացում: Եթե կան միջոցներ, ապա դրանք պետք է ուղղվեն հայալեզու դպրոցների զարգացման համար: Ինչպե՞ս ենք բարձրաձայնում Հայոց ցեղասպանության հարցը, երբ լեզվական ցեղասպանություն ենք իրականացնում», «**Ազգի**» հարցին պատասխանեց երգչուհին:

Երգիչ **Էդվարդ Ջորիկյանն** էլ անհասկանալի է համարում անկախության օրոք օտարալեզու դպրոցների բացման անհրաժեշտությունը: Երգահանը հաճախել է ռուսական դպրոց եւ իր խոսքերով գիտե՝ ինչ խնդիրներ դա կբերի: «Դպրոցը պետք է լինի մայրենի լեզվով: Հազիվ էինք մոռացել «ուգլավոյ մագազին», «օչերեդ», «կոլբասա» բառերը, հիմա նորից ռուսական դպրոցների ու մտածելակերպի էքսպանսիան սկսվելու է»:

Նրանք ու էլի բազմաթիվ արվեստագետներ պետք է մասնակցեին նախ ուրբաթ եւ հետո շաբաթ օրը կայանալիք «Համերաշխության համերգին», որ կազմակերպել էր «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» քաղաքացիական նախաձեռնությունը, սակայն քաղաքապետարանի անհեթեթ պատճառաբանությամբ այն արգելվեց: «Մերժման փաստաթուղթն անհիմն է, որովհետեւ հիմք է ընդունվել 22.04.2010 թ. «Մոսկվա» կինոթատրոնի գլխավոր տնօրեն Մարտին Ադոյանի ներկայացված գրությունը: Քաղաքապետարանից խնդրում է արգելել Շառլ Ազնավուրի անվան հրապարակում զանգվածային միջոցառումներ անցկացնել: Եթե այս տրամաբանությամբ առաջնորդվենք, կստացվի՝ մշակութային յուրաքանչյուր օջախի կամ օբյեկտի տնօրեն կարող է զանգվածային միջոցառում կատարելու հայցը մերժել: Ադոյանի գրությունն արդեն օրե՞նք է մեր հանրապետությունում», «Ուրբաթ» ակումբում ասաց **Արայիկ Հարությունյանը**՝ հավելելով, որ որոշումը կբողոքարկեն համապատասխան ատյաններում:

«Անգամ արվեստի լեզվով մարդկանց խնդրի էությունը բացատրել չի թույլատրվում». այսպես բնութագրեց քաղաքապետարանի որոշումը Վահան Արծրունին: Նա վստահ է, որ հայ ժողովուրդը ռեֆլեքսով զգում է իր անվտանգությանն առնչվող խնդիրներն ու ժամանակին արձագանքում դրանց: «Նման դրսեւորումների ականատեսը եղել ենք: Պարզապես, պետք է փաստենք, որ դեռ ապրում ենք մի շրջանում, երբ գուցե որոշ ցեղերի որերորդ անգամ պետք է բացատրվի՝ ինչ է նշանակում ազգային դպրոց, հայոց լեզու եւ ազգային պետություն», ասաց նա:

Ի դեպ, երեկ Շառլ Ազնավուրի անվան հրապարակում, ուր արգելվել էր Համերաշխության համերգը, տեղի է ունեցել ռոք համերգ՝ նվիրված երաժշտության օրվա:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Մոսկվայի Պոկրովսկու անվան կամերային երաժշտական թատրոնի հյուրախաղերը Երեւանում




**Հայ-ռուսական մշակութային համագործակցության շրջանակներում ՀՀ մշակույթի եւ ՌԴ մշակույթի նախարարությունների միջեւ կնքվել է համագործակցության համաձայնագիր 2010-12 թթ.-ի համար: Այդ ծրագրի շրջանակներում ՀԹԳ միության հետ հունիսի 21, 22 եւ 24-ին Երեւանում հյուրախաղերով հանդես կգա աշխարհահռչակ օպերային ռեժիսոր Բորիս Պոկրովսկու անվան Մոսկվայի պետական ակադեմիական կամերային երաժշտության թատրոնը: Հ. Պարոնյանի անվ. երաժշտական կոմեդիայի թատրոնի բեմում կներկայացվի Մոցարտի երկու գործ՝ «Դոն Ժուան կամ պատժված սրտակերը» երկու գործողությամբ ներկայացումը եւ «Կախարդական սրինգ» երկու գործողությամբ օպերան:**

Մոսկվայի կամերային երաժշտական թատրոնը ԽՍՀՄ ժող. արտիստ, ԽՍՀՄ եւ Ռուսաստանի պետական մրցանակների դափնեկիր, պրոֆեսոր Բորիս Ալեքսանդրի Պոկրովսկին հիմնադրել է 1972 թ., միաժամանակ ստանձնելով թատրոնի գլխավոր ռեժիսորի եւ գեղղեկի պաշտոնները: Թատրոնին 25-ամյակի առիթով շնորհվել է ակադեմիական անվանումը: 2009 թ. հունիսի 5-ին 97 տարեկան հասակում աշխարհահռչակ օպերային ռեժիսորը վախճանվեց: Նրա մահից հետո Պոկրովսկու անվան թատրոնի գլխավոր ռեժիսորի պաշտոնը վստահվեց նրա աշակերտ, ՌԴ արվեստի վաստ. գործիչ Միխայել Կիսլյարովին: Թատրոնը բազմիցս եղել է հյուրախաղերի աշխարհի տարբեր բեմահարթակներում, մասնակցել փառատոների ու արժանացել հանդիսականի համակրանքին:

Երեկ թատրոնի ղեկավարներն ու դերասանները, ներկայացումից առաջ հանդիպեցին լրագրողների հետ եւ պատասխանեցին հարցերին: ՀՀ մշակույթի փոխնախարար **Արթուր Պողոսյանը**, ՀԹԳՄ նախագահ **Հակոբ Ղազանչյանը** ներկայացրեցին հյուրերին ու նշեցին համագործակցության շրջանակներում իրականացված համատեղ միջոցառումները ու շեշտեցին, որ «հայ-ռուսական համագործակցությունը թե՛ քաղաքական, թե՛ առեւտրատնտեսական, եւ թե՛ մշակութային ոլորտներում իր ուրույն տեղն ունի եւ կարեւոր դեր է խաղում երկու երկրների կառավարությունների ծրագրերում»: ՌԴ մշակութային հիմնադրամի փոխնախագահ **Սուրեն Շահումյանը** շնորհակալություն հայտնեց հայաստանյան հյուրախաղերի կազմակերպման եւ ջերմ համագործակցության ու մշակույթի նկատմամբ այդքան ուշադրություն ընձեռելու համար:

Թատրոնի ներկան ներկայացրեց տնօրեն **Օլեգ Միխայլովը**: Նա նշեց, որ անցած մեկ տարին՝ Պոկրովսկու մահից հետո, թատրոնը հայտնվել է շատ դժվարին ու բարդ իրավիճակում: Եվ ահա երեւանյան հյուրախաղերը կկոտրեն այդ անցումային շրջանը ու թատրոնը Պոկրովսկու կողմից բեմադրած երկու գործերը հայ խստապահանջ հանդիսատեսին ներկայացնելով, կհաղթահարի այդ դժվարին հոգեվիճակը, որում հայտնվել են: Թատրոնի գլխ. ռեժիսոր **Միխայիլ Կիսլյարովը** նշեց, որ թատրոնը կամաց-կամաց վերակենդանանում է, եւ արդեն որոշվել է ծրագրային 2-րդ փուլում վերականգնել Պոկրովսկու եւս 4 ներկայացումները եւ նաեւ ընդգրկել ժամանակակից կոմպոզիտորների գործեր, որոնք նվիրված կլինեն Բ. Պոկրովսկու մահվան առաջին տարելիցին:

Դոն Ժուանի դերակատար **Ալեքսեյ Մոչալովը** նշեց, որ Հայաստանում բազմաթիվ անգամ է եղել եւ հյուրախաղերի գալով կրկին հիշում է այն լավ ու բարի օրերը, որ անցկացրել է հայ ընկերների հետ: «**Ազգի**» այն հարցին, արդյո՞ք հայ կոմպոզիտորների գործեր կբեմադրվեն իրենց թատրոնում, պրն Կիսլյարովը նշեց, որ արդեն Միխայել Թարիվերդիեւի երկու գործ բեմադրվել է եւ մեկն էլ պատրաստվում են բեմադրել: «Թատրոնը երկրի դեմքն է, եւ դրա վրա պետք է ուշադրություն դարձվի պատշաճ կարգով», նշեց թատրոնի գլխավոր ռեժիսորը ու չթաքցրեց, որ իրենք էլ բազմաթիվ դժվարություններ, նոր հանդիսատես գրավելու լուրջ խնդիրներ ունեն եւ դրանց շուրջ լուրջ աշխատանքներ են տանում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Կոմիտաս-140. Երեկո Բեռլինի Հումբոլտ համալսարանում

**Հունիսի 22-ին, ժամը 17.00-19.00-ին Բեռլինի Հումբոլտ համալսարանի Ռոյթեր դահլիճում կնշվի Կոմիտասի 140-ամյակին նվիրված միջոցառում: 1896-1899 թվականներին Կոմիտասը ուսանել է հենց հիշյալ համալսարանում, որը ժամանակին Ֆրիդրիխ Վիլհելմ անունն է կրել:**

**Ողջույնի խոսքով հանդես կգա Հումբոլտ համալսարանի Եվրոպական ազգագրության ինստիտուտի դոկտոր պրոֆեսոր Ռեգինա Ռյոմհիլդը: Այնուհետեւ «Կոմիտաս. կյանքը, արվեստը եւ Բեռլինում ուսանելու տարիները» դասախոսությունը կներկայացնի Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դոկտոր, պրոֆեսոր Կարինե Ջաղացպանյանը, ապա ամբիոնը կտրամադրվի Հասմիկ Մելքոնյանին: Բեռլինի Ազատ համալսարանի աշխատակիցը հանդես կգա «Կոմիտասը եւ խազերը» բանախոսությամբ: Համերգային բաժնում կհնչեն Կոմիտասի ստեղծագործությունները՝ երգչուհի Արփինե Օհանյանի եւ դաշնակահար Կարինե Գիլանյանի կատարմամբ:**

**Հիշյալ միջոցառումը Հումբոլտ համալսարանի Եվրոպական ազգագրության ինստիտուտի, Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի եւ ՀՀ մշակույթի նախարարության համագործակցության արդյունք է:**

ԱՆ. Հ.
Գերմանիա

# «Կերպարվեստի» հերթական համարում

«Կերպարվեստ» հանդեսի այս տարվա առաջին, երկրորդ միասնական համարի ապրիլյան թողարկումը, ինչպես նախորդները, հիմնականում անդրադարձներ են Նկարիչների միության նախընթաց ցուցահանդեսներին, նկարիչների հոբելյաններին՝ հոդվածների, տպավորությունների, կարծիքների միջոցով:

Հայոց ցեղասպանության գեղարվեստական անդրադարձների մեջ նկարչական արտահայտությունները կարեւոր տեղ են գրավում: «Ցավի գույնը» վրձնի հայ վարպետները իրենց կտավներում մարմնավորել են դեռ 1915-ից առաջ էլ. 1895-96 թթ. հայկական առաջին կոտորածների տպավորությամբ՝ որպես բողոքի պոռթկում, ընդվզում: Նրանցից առաջինը Հովհ. Այվազովսկին էր, եւ, իհարկե, Վարդգես Սուրենյանցը, որն իր ամենաազդեցիկ, ցնցող ու տպավորիչ գործերից «Ոտնահարված սրբությունը» նկարեց 1895-ին. դրան հետեւեցին այլ գործեր: «Կերպարվեստի» ապրիլյան համարի շապիկին Սուրենյանցի այս նկարի վերատպությունն է եւ գլխավոր նյութը դարձյալ նրա արվեստին է վերաբերում:




Վարդգես Սուրենյանցի 150-ամյակի առիթով ընդարձակ հրապարակումով Շուշանիկ Ջոհրաբյանը ներկայացնում է նկարչի ստեղծագործությունը՝ կենտրոնանալով մասնավորապես նրա արվեստում սիմվոլիզմի արտահայտություններին եւ առկա միտումներին: (Ապրիլյան օրերին Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին էր նվիրված Նկարիչների տան 3 սրահներում բացված ցուցահանդեսը):

ՀՆՄ-ի ուշագրավ ցուցադրություններից Էդուարդ Արծրունյանի արվեստին անդրադարձել է Յուրի Խեչանյանը: Հանդեսի էջերը շարունակաբար համառոտ ներկայացնում են Անատոլի Պապյանին, Ռուբեն Շահվերդյանին, Վիլիկ Ջաքարյանին, Ղարիբ Եղիազարյանին, Արա Բաղդասարյանին, Թաթոսին եւ ուրիշներին, տպավորությունների գրքից կարծիքներ է ներկայացվում մի շարք ցուցահանդեսների մասին, ինչպես Ռուբեն Ադալյանի, լուսանկարիչ Սամվել Սեւադայի, Վիկտոր Հովհաննիսյանի, Արեւշատ Ավագյանի եւ այլոց:

Մարտին Պետրոսյանի վրձնի՝ անտեսանելիի շերտերը միագույնի նրբերանգներով բացող արվեստի մասին է պատմում Արեւշատ Ավագյանը: Արվեստ, որ ինչպես Ռոբերտ Էլիբեկյանն է գրում, լիովին հնարավոր չէ մեկնաբանել, «որովհետեւ գերազանցապես հոգեւոր է»: Մ. Պետրոսյանն ասես ժամանակի հեքիաթն է հյուսում՝ նրբագծի զարմանալի քնքշությամբ:

«Վերլուծական էջում» ՀԱՊ-ի գրաֆիկայի բաժնի վարիչ Վիկտորյա Բադալյանը անդրադառնում է Գեորգի Յակուլովի արվեստի թատերայնությանը: Յուրահատուկ ու գեղեցիկ էր Անուշ Եղիազարյանի գոբելենային արվեստի ցուցադրությունը: Վարդիթեր Գամաղելյանը մասնագիտական դիտարկումներով կարողացել է ներթափանցել գոբելենագործի «զմայլող գալարապտույտների, գծի ու գույնի ինքնաբուխ ժայթքումների» մեջ, տեսնել «գործվածքի» պրկումների ու բռնկումների արվեստային ձեւակերպումները:

«Կերպարվեստի»՝ հիմնականում միատոն հրապարակումներից առանձնանում են «Հուշապատում», «Վարպետաց դասեր» եւ «Մի կուրսի պատմություն» խորագրերը:

«Վարպետաց դասերը» հիշատակում է վերջերս տպագրված Վիգեն Իսահակյանի «Փարիզ. Քոչար, անցած օրեր» գիրքը եւ ներկայացնում Մ. Սարյանի տուն-թանգարանի «Սարյանը եւ Փարիզը» հուշագրքերից հատվածներ: Ներկայացված էջերում Վարպետի հայացքը փարիզյան տպավորություններից սեղմ է, դիպուկ ու կոնկրետ: Այս ուղեւորությունը, ծանոթությունները համաշխարհային կերպարվեստի մեծություններին, տարբեր ուղղությունների ուսումնասիրությունները բնականաբար բարենպաստ ազդեցություններ են ունեցել իր արվեստի վրա, ավելի հաստատուն դարձրել ստեղծագործական սկզբունքները: Հետաքրքրական են Սարյանի դիտարկումները իմպրեսիոնիզմի, ֆրանսիական գրքարվեստի, ֆրանսիացի նկարիչների, մասնավորապես Ռենուարի, արվեստի ազգային եւ համամարդկային բնույթի ու նշանակության մասին:

Հանդեսի էջերում տեղ են գտել նաեւ միության աշխատանքային ընթացիկ տեղեկություններ, այլ լուրեր:

Մ. Բ.

AZG NEW PDF.qxd 21/06/2010 21:51 Page 1



# Հայ դյուցազունն աշխարհի երիտասարդների չեմպիոն

20-ամյա Ռուբեն Ալեխանյանը նվաճեց ծանրամարտի աշխարհի երիտասարդների չեմպիոնի տիտղոսը: Սոֆիայում անցկացված առաջնության ավարտական օրը 145 կգ-անոց մեր դյուցազունը մրցակցությունից դուրս էր գերծանրքաշայինների մրցապայքարում: Ճիշտ է, պոկում վարժությունում նրա միայն մեկ մոտեցումն էր հաջող, սակայն դա էլ բավական էր ոսկե մեդալին արժանանալու համար:



Ռուբենը մրցահարթակ դուրս եկավ միայն այն ժամանակ, երբ մյուս մասնակիցներն արդեն ավարտել էին ելույթները: Այդ պահին լավագույն արդյունքի էր հասել ռուսաստանցի Զաուրբեկ Նանիեւը՝ բարձրացնելով 172 կգ: Իսկ Ալեխանյանը մրցումը սկսեց 180 կգ-ից՝ 2-րդ մոտեցմամբ հաղթահարելով ծանրությունը: 3-րդ մոտեցման համար նա պատվիրել էր 190 կգ, սակայն չկարողացավ բարձրացնել:

Պայքար չընթացավ նաեւ հրում վարժությունում: Երեք ծանրորդ՝ Զաուրբեկ Նանիեւը, իրանցի Բահադուր Մուլաեւը եւ թայվանցի Չաո Շի Չին մրցումն ավարտել էին 208 կգ արդյունքով: Հայ ծանրորդն առաջին իսկ մոտեցմամբ իրեն ենթարկելով 212 կգ-անոց ծանրաձողը, երկամարտում ցույց տվեց 392 կգ արդյունք ու նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Այլեւս իմաստ չուներ շարունակել ելույթները, ուստի Ռուբենը հրաժարվեց մյուս 2 փորձերից:

Իհարկե, եթե գերծանրքաշային կարգում մրցակցություն ընթանար, Ալեխանյանն ավելի բարձր արդյունք ցույց կտար: Հիշեցնենք, որ գարնանը Մինսկում կայացած Եվրոպայի մեծահասակների առաջնությունում հայ ծանրորդը երկամարտի 432 կգ (195+237) արդյունքով արժանացել էր արծաթե մեդալի՝ 8 կգ-ով զիջելով ռուսաստանցի Եվգենի Չիգիշեւին:

Ռուբենի առավելության մասին է վկայում այն փաստը, որ Սոֆիայում նա 12 կգ-ով գերազանցեց 2-րդ տեղը գրաված Զաուրբեկ Նանիեւին: Բրոնզե մեդալակիր Չաո Շի Չին երկամարտում ցույց տվեց 378 կգ (170+208) արդյունք:

# Հոլանդիան ու Բրազիլիան 1/8 եզրափակիչում են

Ֆուտբոլի աշխարհի առաջնությունում առաջինը 1/8 եզրափակիչի ուղեգիր նվաճեց Հոլանդիայի հավաքականը, որը Սնեյդերի միակ գոլի շնորհիվ 2-րդ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով ճապոնացիների նկատմամբ: Հոլանդացիների հաջողությունը կրկնեցին բրազիլացիները, որոնք 3-1 հաշվով պարտության մատնեցին Կոտ դ'Իվուարի հավաքականին: Իսկ ահա աշխարհի չեմպիոն իտալացիները կրկին հիասթափեցրին՝ միայն 11 մ հարվածի շնորհիվ խուսափելով պարտությունից նորզելանդացիների հետ մրցախաղում (1-1): F խմբի առաջատար դարձավ Պարագվայի հավաքականը՝ 2-0 հաշվով հաղթելով Սլովակիայի ընտրանուն:

Դանիացիները առաջին հաղթանակը տոնեցին՝ առավելության հասնելով Կամերունի հավաքականի նկատմամբ (2-1): Իսկ ահա C խմբում Անգլիա-Ալժիր խաղում դարպասները մնացին անառիկ:

Երեկ պորտուգալացիները ջախջախեցին ԿԺԴՀ-ի հավաքականին (7-0), իսկ Չիլի-Շվեյցարիա խաղում գրանցվեց 1-0 հաշիվ:

# Մրցակիցները հայտնի են

Երեկ Շվեյցարիայի Նիոն քաղաքում կայացավ չեմպիոնների լիգայի եւ Եվրոպայի լիգայի 2010-11-ի խաղարկության առաջին եւ 2-րդ որակավորման փուլերի մասնակիցների վիճակահանությունը:

ՀՀ չեմպիոն «Փյունիկը» չեմպիոնների լիգայի որակավորման 2-րդ փուլում կմրցի Սերբիայի «Պարտիզանի» հետ: Վերջինս երկրի վերջին 3 տարիների անփոփոխ չեմպիոնն է: Ավարտված առաջնությունում «Պարտիզանն» անպարտելի մնաց՝ 30 հանդիպումներից 24-ում հաղթելով, 6-ն ավարտելով ոչ-ոքի: Չեմպիոնի խփած եւ բաց թողած գնդակների տարբերությունը եւս տպավորիչ է՝ 63-14: Առաջին խաղը «Փյունիկը» կանցկացնի մրցակցի դաշտում: Առաջին հանդիպումները նշանակված են հուլիսի 13-14-ին, պատասխան խաղերը՝ հուլիսի 20-21-ին:

Եվրոպայի լիգայի մրցաշարի որակավորման 1-ին փուլում «Ուլիսը» կմրցի իսրայելական «Բնեյ Եգուդայի» հետ, իսկ «Բանանցի» մրցակիցը կլինի հայ մարզասերներին լավ հայտնի Կիպրոսի «Անորտոսիսը»: «Ուլիսն» առաջին խաղում կհյուրընկալի մրցակցին հուլիսի 1-ին: Այդ օրը «Բանանցը» կխաղա մրցակցի դաշտում: Պատասխան հանդիպումները կկայանան հուլիսի 8-ին: «Անորտոսիսը» Կիպրոսի վերջին առաջնության բրոնզե մրցանակակիրն է, իսկ իսրայելական ակումբը գրավել է 4-րդ տեղը:

ՀՀ փոխչեմպիոն «Միկան» պայքարը կսկսի որակավորման 2-րդ փուլից: Թիմը հուլիսի 15-ին կհյուրընկալվի «Լուսիտանս» (Անդորրա)-«Ռաբոտնիչկի» (Մակեդոնիա) զույգի հաղթողին: Առաջին փուլում հաջողության հասնելու դեպքում «Բանանցը» կմրցի «Շիբենիկ» (Խորվաթիա)-«Սլիմա» (Մալթա) զույգի հաղթողի հետ, իսկ «Ուլիսի» մրցակիցը կլինի իռլանդական «Շեմրոկ Ռովերսը»:

# «Բանանցն» արժանիորեն հաղթեց

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 12-րդ տուրի կենտրոնական խաղը «Փյունիկի» եւ «Բանանցի» միջեւ «Հանրապետական» մարզադաշտ էր բերել մեծաքանակ ֆուտբոլասերների: Այդ հետաքրքրասիրությունը բացատրվում էր այն բանով, որ մրցակիցները հավասար միավորներ էին վաստակել ու հաղթողը միանձնյա կգլխավորեր մրցաշարային աղյուսակը:

«Փյունիկը» նախորդ տուրում անդրանիկ պարտությունն էր կրել՝ 1-3 հաշվով զիջելով «Ուլիսին», իսկ ահա «Բանանցը» 6 անընդմեջ հաղթանակ էր տոնել: Խաղն արդարացրեց մարզասերների սպասելիքները, որոնք ականատես եղան դիտարժան ֆուտբոլի: Ցավոք ընդմիջումից հետո մրցավար Վահան Մինասյանի գործողությունները զգալի նյարդայնություն հաղորդեցին մրցակցությանը, ավելորդ կրքեր բորբոքեցին: Նա դաշտից հեռացրեց «Բանանցի» 2 ֆուտբոլիստի, նաեւ գլխավոր մարզիչ Ստեւիցա Կուզմանովսկուն, սակայն դա էլ չօգնեց «Փյունիկին» խուսափելու 2-րդ անընդմեջ պարտությունից (2-3):


ՖՈՏՈԼՈՒՐ

Երկու թիմերն էլ ակտիվ սկսեցին խաղը: «Բանանցը» խաղասկզբում մի քանի նպաստավոր պահեր կորցրեց, իսկ ահա «Փյունիկն» օգտագործեց գոլ խփելու իր հնարավորությունը: 17-րդ րոպեին Միհրան Մանասյանը մոտ տարածությունից բացեց հաշիվը: Բաց թողած գոլը չընկճեց «Բանանցին», որը երկու անգամ հաջող իրացրեց ստանդարտ դրությունները: Նախ անկյունայինի խաղարկումից հետո առաջնության լավագույն ռմբարկու Էդուարդո դո Սանթոսը գլխի հարվածով վերականգնեց հավասարակշռությունը, ապա տուգանայինի խաղարկումից հետո Արարատ Առաքելյանը կրկին գլխի հարվածով առաջ մղեց «Բանանցին»: Ցավոք գոլ խփելուց հետո Էդուարդո դո Սանթոսը վնասվածքի պատճառով չկարողացավ շարունակել հանդիպումը, ինչը մեծ կորուստ էր «Բանանցի» համար: Մինչեւ ընդմիջման գնալը Դենիրան Օրտեգան 3-րդ գոլը խփեց՝ ավելի շոշափելի դարձնելով իր թիմի առավելությունը:

Ընդմիջումից հետո «Փյունիկը» շատ ջանքեր գործադրեց պարտությունից խուսափելու համար, սակայն միայն մեկ անգամ գնդակը Մարկոսի հարվածից հետո հայտնվեց դարպասում:

Այսպիսով, 9 հոգով հաղթելով «Փյունիկին», «Բանանցը» ոչ միայն ռեւանշի հասավ գավաթի եզրափակիչում չեմպիոնից կրած խոշոր հաշվով (0-4) պարտության դիմաց, այլեւ միանձնյա գլխավորեց աղյուսակը: Այնպես որ մեր առաջնությունում առաջիկայում բավական հետաքրքրական իրադարձություններ են սպասում:

Հետխաղյա մամուլի ասուլիսում թեեւ 2 թիմերի մարզիչներն էլ չցանկացան գնահատական տալ մրցավարությանը, սակայն ստիպված էին շոշափել այդ թեման:

**Վարդան Մինասյան («Փյունիկ»)** - Շնորհավորում եմ «Բանանցին» հաղթանակի առթիվ: Շատ լավ, լարված խաղ ստացվեց, որտեղ ոչ-ոքին բացառվում էր: Այսօր հաջողությունն ավելի շատ «Բանանցի» կողմն էր: Ֆուտբոլը տղամարդու խաղ է, իսկ «Բանանցի» ֆուտբոլիստներն ամեն ընդհարումից հետո պառկում էին խաղադաշտում: Օրինակ, ի՞նչ էր պատահել Կակոսյանին, որ պառկած էր մնացել: Իսկ քիչ անց նա ոտքի կանգնեց ու սկսեց վազել: Նույնիսկ հաղթանակը պետք է կարողանալ արժանիորեն տոնել: Ես ընդհանրապես մրցավարությունից չեմ ցանկանում խոսել: Ես շատ եմ հարգում լրագրողներին ու խնդրում եմ ուսումնասիրել ու վերլուծել խաղի վիճելի դրվագները: Ինքս էլ այժմ չգիտեմ, թե ինչ է կատարվել: Եթե պարզվի, որ իրոք կար կողմնակալություն, ապա ներողություն կխնդրեմ ձեզանից:

Չեմպիոնների լիգայի մրցաշարի մեկնարկի շեմին ձախ պաշտպան ենք փորձարկում, երեւի նա ընդգրկվի «Փյունիկում»: Երեքշաբթի օրն էլ 2 հարձակվող են ժամանելու Երեւան:

**Ստեւիցա Կուզմանովսկի («Բանանց»)** - Ուրախ եմ հաղթանակի համար, շնորհավորում եմ սաներիս ու ինձ: Մեր ֆուտբոլիստները դժվարին իրադրությունում կամք ու վճռականություն դրսեւորեցին, լավ ֆուտբոլ ցուցադրեցին: Այսօր մենք գերազանցեցինք մրցակցին: Չեմ կարող մեկնաբանել, թե ինչու մենք կարմիր քարտերի արժանացանք: Նման մրցավարության դեռ չէի հանդիպել: Ես փորձում էի պաշտպանել իմ խաղացողներին: Մեզ նման հանդիպում էր անհրաժեշտ եվրոլիգայի մրցաշարից առաջ: Չեմ բացառում, որ «Բանանցում» հնարավոր են համալրումներ: Եթե ցանկանում ենք հայկական ֆուտբոլը զարգացնել, ապա պետք է պահպանվեն արդար խաղի կանոնները, ազնիվ մրցակցություն ընթանա:

«Փյունիկին» միավորներով հավասարվեց «Ուլիսը»՝ 3-1 հաշվով հաղթելով «Կիլիկիային»: Ուլիսցիներից գոլերը խփեցին Նորայր Սահակյանը, Գեորգի Կրասովսկին ու Շոթա Ջիքիան: «Կիլիկիայից» միակ գոլի հեղինակը Տիգրան Ղարաբաղցյանն է: Կարող էր աչքի ընկնել նաեւ Սարգիս Մովսիսյանը, սակայն նա չիրացրեց 11 մ հարվածը: «Ուլիսի» դարպասապահ Վլադիմիր Մալկովը հետ մղեց գնդակը: «Գանձասար»-«Միկա» խաղում Բոտի Դեմելի խփած գնդակին դաշտի տերերը պատասխանեցին Սերգեյ Էրզրումյանի գոլով: Գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1: Գյումրիում «Իմպուլսը» «Շիրակին» հաղթեց Ջուլիանո Հիմենեսի խփած միակ գոլի շնորհիվ: Ի դեպ, նախորդ տուրում «Իմպուլսի» կազմում որակազրկված ֆուտբոլիստ հայտավորելու համար «Կիլիկիայի» հետ խաղում (2-3) դիլիջանցիներին 0-3 հաշվով պարտություն է գրանցվել:

Մրցաշարային աղյուսակ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Բանանց | 12 | 9 | 2 | 1 | 29-13 | 29 |
| 2. Փյունիկ | 12 | 8 | 2 | 2 | 30-11 | 26 |
| 3. Ուլիս | 12 | 8 | 2 | 2 | 19-7 | 26 |
| 4. Միկա | 12 | 6 | 3 | 3 | 20-11 | 21 |
| 5. Իմպուլս | 12 | 4 | 1 | 7 | 7-19 | 13 |
| 6. Գանձասար | 12 | 3 | 1 | 8 | 9-20 | 10 |
| 7. Կիլիկիա | 12 | 3 | 1 | 8 | 12-24 | 10 |
| 8. Շիրակ | 12 | 1 | 0 | 11 | 9-30 | 3 |

Ռմբարկուները

| | | |
|---|---|---|
| Էդուարդո դո Սանթոս | «Բանանց» | 11 |
| Գեւորգ Ղազարյան | «Փյունիկ» | 8 |
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 6 |
| Սամվել Մելքոնյան | «Բանանց» | 5 |

# Գաբրիելը հանգրվանեց 4-րդ տեղում

Իտալիայում ավարտվեց Ռուի Լոպեսի հուշամրցաշարը, որի մրցանակներն էին վիճարկում 8 շախմատիստներ: Ավարտական տուրում ոչ-ոքի խաղալով կուբացի Մանուել Պերես Կանդելարիոյի հետ, Գաբրիել Սարգսյանը 4 միավորով զբաղեցրեց 4-րդ տեղը: Նա տարավ երկու հաղթանակ, չորս պարտիա ավարտեց ոչ-ոքի, կրեց մեկ պարտություն (Վլադիմիր Մալախովից):



Մրցաշարի հաղթող դարձավ բուլղարացի գրոսմայստեր Իվան Չեպարինովը, որն ավարտական տուրում պարտության մատնելով Պիա Կրամլինգին, վաստակեց 6 միավոր: Նրանից 1,5 միավոր հետ մնացին Ֆաբիանո Կարուանան եւ Վլադիմիր Մալախովը, որոնք հաղթեցին համապատասխանաբար Իվան Սալգադոյին եւ Դեյսի Կորիին: Սալգադոն 4 միավորով զբաղեցրեց 5-րդ տեղը: Նրան հաջորդում են Կանդելարիոն՝ 2, Կրամլինգը՝ 2 եւ Կորին՝ 1 միավոր:

# Անելկայի հեռացումը հարուցել է ֆուտբոլիստների դժգոհությունը

Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Նիկոլյա Անելկան հեռացվել է թիմից: Մեքսիկայի հավաքականի հետ հանդիպման ընդմիջմանը Ռայմոն Դոմենեկը խստորեն քննադատել էր Անելկային, իսկ վերջինս գլխավոր մարզչին հայհոյել էր: Դոմենեկն անմիջապես փոխարինել էր Անելկային՝ խաղադաշտ մտցնելով Ժինյակին:

Ֆրանսիական լրատվամիջոցների համաձայն, ֆուտբոլիստին առաջարկել են ներողություն խնդրել Դոմենեկից, սակայն վերջինս հրաժարվել է: Նա ցանկանում էր հանդիպել լրագրողներին, սակայն Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիան արգելել է: Անելկան հայտարարել է, որ այլեւս հավաքականում հանդես չի գա:

Ի նշան բողոքի, Ֆրանսիայի հավաքականի ֆուտբոլիստները հրաժարվել էին մարզումից, երբ թիմի ավագ Պատրիս Էվրան վիճաբանել էր ֆիզպատրաստության մարզիչ Ռոբերտ Դյուվերնի հետ: Ստեղծված իրավիճակում հրաժարական է տվել հավաքականի տեխնիկական տնօրեն Ժան Լուի Վալանտենը:

Հավաքականի ֆուտբոլիստները նամակով դիմել են Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիա՝ իրենց անհամաձայնությունն արտահայտելով Անելկայի հեռացման որոշման դեմ: Միաժամանակ նրանք նշել են, որ մեծ պատասխանատվություն են կրում իրենց երկրի հանդեպ եւ ամեն ինչ կանեն խմբային մրցաշարի ավարտական խաղում լավ արդյունքի հասնելու համար:

Պատասխան նամակում ֆուտբոլի ֆեդերացիան անթույլատրելի է համարել մարզմանը չմասնակցելը: Իսկ Անելկայի հեռացման որոշումը կայացվել է նրա հետ զրույցից հետո, որին ներկա է գտնվել նաեւ հավաքականի ավագ Պատրիս Էվրան: Ֆուտբոլի ֆեդերացիան հավաքականի ֆուտբոլիստների պահվածքի համար ներողություն է խնդրել ֆրանսիացիներից: Իսկ միջադեպին հետագայում կանդրադառնան ֆեդերացիայի հատուկ նիստում:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 21/06/2010 22:35 Page 1



Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական համաժողովի օրերին, որին մասնակցում էր Հայաստանի նախագահի գլխավորած պատվիրակությունը, տեղի ունեցան հայ-ռուս-ադրբեջանական ամենաբարձր մակարդակով բանակցություններ՝ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի մասնակցությամբ: Թեման, բնականաբար, ղարաբաղյան հակամարտությունն էր: Այս կապակցությամբ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հարցազրույց է տվել ռուսական «Նեզավիսիմայա գազետա»-ին, որտեղ մասնավորապես խոսել է զիջումների եւ փոխզիջումների տարբերություններից, մադրիդյան սկզբունքներից, բանակցություններին Ստեփանակերտի մասնակցության անհրաժեշտությունից եւ առհասարակ Հայաստանի՝ հարեւանների հետ ունեցած հարաբերություններից:

# «Ադրբեջանն «ընդունում» է մադրիդյան սկզբունքները՝ դրանց մեծ մասին չհամաձայնելով»

*Նշել է արտգործնախարար Նալբանդյանը «Նեզավիսիմայա գազետայում»*

Իսկ Ադրբեջանի ղեկավարները, խոսելով Ղարաբաղին ինքնավարության իրավունք տալու մասին՝ Ադրբեջանի ենթակայության տակ, փաստորեն, խախտում են Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, մինչդեռ այս սկզբունքը հիմնականներից է մադրիդյան փաստաթղթում, որը մեկ անգամ եւս հաստատվել է ԵԱՀԿ անդամ 56 երկրների արտգործնախարարների կողմից 2009-ի դեկտեմբերին Աթենքում:

«հակամարտության լուծման հիմնաքարն է». «Այս հանգամանքը նաեւ ամրագրված է հակամարտության լուծմանն ուղղված Մինսկի համաժողովի մանդատով: Հենց ԼՂ ժողովուրդը պետք է որոշի իր կարգավիճակը: Ղարաբաղի ներգրավվածության կարեւորության մասին մեկ անգամ չէ, որ հայտարարել են Մինսկի խմբի համանախագահները: Հիշեցնեմ, որ 1994-ին Ռուսաստանի նախաձեռնությամբ զինադադարի համաձայնագիրը նույնպես համաձայնեցված է ղարաբաղյան կողմի հետ. փաստաթղթում առկա է նաեւ Լեռնային Ղարաբաղի ստորագրությունը»:



Ադրբեջանը կոպտորեն խախտում է մադրիդյան սկզբունքների եւս մի կարեւոր դրույթ, որը պահանջում է ուժի չկիրառում, նրանք հրաժարվում են կատարել նաեւ ԵԱՀԿ առաջարկությունը, որ առաջնային գծից պետք է հեռացվեն դիպուկահարները:

Պատասխանելով լրագրողի հարցին՝ ի՞նչ զիջումների կարող է դիմել Երեւանը Ղարաբաղի հարցում, նախարարը պատասխանել է. «Կարծում եմ, ավելի ճիշտ է խոսել փոխզիջումների մասին, այլ՝ ոչ թե զիջումների: Բայց եկեք ամեն ինչ սկզբից սկսենք: Ինչպես հայտնի է, այսօր բանակցությունները ընթանում են 2007-ի նոյեմբերին Մինսկի խմբի համանախագահների ներկայացրած մադրիդյան սկզբունքների հիման վրա: Հայաստանն այս փաստաթուղթը որպես հիմք ընդունել է ավելի քան երկու տարի առաջ, մինչդեռ Ադրբեջանը առհասարակ հերքում էր նման փաստաթղթի գոյությունը: Իսկ հիմա՝ երկու տարի անց, Բաքուն ընդունել է կեցվածք, թե իբր «ինչ-որ բան» ընդունում է: Ի՞նչ է ընդունում Ադրբեջանը: Նշեմ, որ հակամարտության լուծման առանցքային հարցն է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը: Այս մասին հայտարարել են անգամ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահները անցյալ հուլիսին լ'Ակվիլայում՝ հրապարակելով մադրիդյան որոշ սկզբունքներ, որտեղ ասվում է, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը պետք է որոշվի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ կամքի հիման վրա:

Մայնդորֆյան հռչակագրի ընդունումից հետո Ադրբեջանի իշխանությունները հայտարարեցին, թե փաստաթղթում տեղ գտած դրույթը, ըստ որի չի խարխուլվում ուժի կիրառումը, չի նշանակում, թե Ադրբեջանը ստանձնում է ուժ չկիրառելու պարտավորություն, ինչպես ասում են՝ առանց մեկնաբանությունների: Ուժի կիրառման սպառնալիքներ Բաքվից լսվում են ամեն օր: Թերեւս նրանք այդպես են վարվում բանակցությունները տապալելու ցանկությամբ: Ադրբեջանն այսօր «բռնում» է միայն մեկ կետ՝ տարածքային ամբողջականության, ընդ որում՝ սա էլ ներկայացնելով յուրովի: Դժվար է համոզել որեւէ մեկին, թե դու ընդունում ես մադրիդյան սկզբունքները, եթե դու համաձայն չես դրա զգալի մասին»:

Խոսելով բանակցություններին Ստեփանակերտի մասնակցության մասին՝ Նալբանդյանը շեշտել է, որ Ստեփանակերտի մասնակցությունը

Նալբանդյանը խոսել է նաեւ հայ-թուրքական գործընթացից՝ շեշտելով, որ դրա վերականգնումը հնարավոր է միայն այն պարագայում, երբ «Անկարան կրկին պատրաստ կլինի առաջ գնալ առանց նախապայմանների»: Նախարարն ընդգծել է, որ այս մասին բազմիցս են հայտարարել «Մոսկվայից, Բրյուսելից, Վաշինգտոնից եւ Փարիզից»:

Վերջում ՀՀ արտգործնախարարը անդրադարձել է նաեւ հայ-իրանական եւ հայ-վրացական հարաբերություններին: Նալբանդյանը նշել է, որ Հայաստանն ու Իրանը կապված են համատեղ անցյալով, բարեկամական կապերով, վերջին ժամանակներում՝ նաեւ տնտեսական մի շարք ծրագրերով. «Մենք ուշադրությամբ հետեւում ենք Իրանի ատոմային ծրագրի ընթացքին եւ հույս ունենք, որ բոլոր վիճելի հարցերը կլուծվեն բանակցություններով»: Հայ-վրացական հարաբերությունների մասին խոսելիս նախարարը նշել է. «Հայաստանն այն երկրներից է, որոնք շահագրգռված են բարգավաճ եւ անվտանգ Վրաստան տեսնելով: Եվ սա ոչ միայն այն պատճառով, որ մեր ապրանքաշրջանառության 70 տոկոսը Վրաստանի տարածքով է կատարվում, այլեւ այն, որ այդ երկրում մենք ունենք բազմահազարանոց համայնք, եւ մեր երկու երկրները կապված են դարավոր բարեկամության եւ բարիդրացիության կապերով: Իսկ «մանր եւ զգայուն խնդիրները», չեմ կարծում, որ մենք ունակ չենք համատեղ լուծելու:

Պատրաստեց՝
ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆԸ

# Սարիբեկ Սուքիասյանի նկատմամբ քրեական գործը կարճվել է

ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժանմունքի քննիչ Հայկ Դելեյանի որոշմամբ կարճվել է «Հայէկոնոմբանկ»-ի տնօրենների խորհրդի նախագահ Սարիբեկ Սուքիասյանի (գործարար, նախկին պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի եղբոր) եւ «Նարեկ» ԲԲԸ-ի տնօրեն Արտաշես Ստեփանյանի դեմ հարուցված քրեական գործը: Նրանք մեղադրվում էին «Բյուրեղ» ՓԲԸ-ի բաժնետեր Գոռ Դավթյանին ապօրինաբար ազատությունից զրկելու մեջ: Քննիչի որոշմամբ, քրգործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով: Նրանք մեղադրվում էին նաեւ սպանության սպառնալիքի, ինչպես նաեւ զենք, զինամթերք ապօրինի պահելու մեջ:

ՉԵԼԻՔԸ՝ ՎԱՇԻՆԳՏՈՆԻՑ

# «Իսրայելն արգելափակում է ԱՄՆ-ի հետ մեր հարաբերությունները»

Իսրայելի հետ առաջացած ճգնաժամից հետո Թուրքիան ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում «դեմ» էր քվեարկել Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների խստացման բանաձեւին: Այս ամենը պատճառ էր դարձել, որ սրվեն առանց այդ էլ լուրջ խնդիրների առջեւ կանգնած թուրք-ամերիկյան հարաբերությունները: Դրանց բարելավման հրամայականով Անկարան Վաշինգտոն էր գործուղել մի պատվիրակություն՝ վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության փոխնախագահ Օմեր Չելիքի գլխավորությամբ, որը կուսակցության արտաքին հարաբերությունների գծով պատասխանատուն է:

Հունիսի 19-ին, ինչպես հաջորդ օրվա համարում վկայում է «Զաման» թերթը, Օմեր Չելիքը մամուլի ասուլիս է տվել Վաշինգտոնում, որտեղ ասել է. «Մեր այն գործընկերներին, որոնք Թուրքիա-ԱՄՆ ճգնաժամից են խոսում, բացատրել ենք, որ երկու երկրների միջեւ որեւէ ճգնաժամ չկա, պարզապես նրանք տարբեր մոտեցումներ են ցուցաբերում որոշակի հարցերին»:

Այն խոսակցությունների առնչությամբ, թե ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնն ընդունեց Թուրքիայի արդյունաբերողների եւ գործարարների միության ներկայացուցիչներին, իսկ պատվիրակությանը՝ ոչ, Չելիքը նշել է, որ իրենք հանդիպում չեն խնդրել պետքարտուղարից: Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւը ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի օրակարգում ընդգրկելու վերաբերյալ հարցին ի պատասխան Օմեր Չելիքն ասել է. «Իսրայելի նկատմամբ Թուրքիայի որդեգրած իրավացի դիրքորոշումը պետք է աջակցություն գտնի: Մինչդեռ դրա փոխարեն Թուրքիային քննադատում են, նրա առջեւ են դնում վերջին իրադարձությունների հետ որեւէ առնչություն չունեցող քրդական, հայկական խնդիրները: Այս մոտեցումն անհամատեղելի է բարեկամության հետ, որովհետեւ բարեկամները միմյանց շանտաժի չեն ենթարկում»:

Այնուհետեւ նա ասել է, որ փորձ է արվում Իսրայելի հետ առաջացած խնդիրը պայմանավորել Իրանի նկատմամբ պատժամիջոցների խստացման բանաձեւին Թուրքիայի «դեմ» քվեարկությամբ, ապա եւ ավելացրել. «Ելնելով այս պայմանավորումից, Իսրայելը ձգտում է արգելափակել թուրք-ամերիկյան հարաբերությունները, մեր ամերիկացի գործընկերները թուրք-ամերիկյան հարաբերությունների արգելափակման հարցում պետք է խոչընդոտեն Իսրայելի գործունեությանը եւ թույլ չտան, որ խախտվի իսրայելական ագրեսիվ դիրքորոշումը»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Ընդդեմ ադրբեջանական ստահոդ քարոզչության

Դեռ Խորհրդային Միության գոյության օրերից, սկսած 1960-ական թվականներից, Հայաստանի հարեւան երկրի մայրաքաղաք Բաքվում ենթադրյալ «ակադեմիական» հրատարակություններ լույս տեսան, որոնցում աղավաղվում էր ոչ միայն մեր, այլեւ ամբողջ տարածաշրջանի պատմությունը: Վերջին տարիներին այդ ստահոդ քարոզչությունը առավել մեծ թափ է ստացել, եւ հայկական կողմի անարձագանք թողնելը հնարավորություն է ընձեռում, որ դրանք շարունակվեն: Նման իրավիճակը հուշել է **Ռուբեն Գալչյանին** Լոնդոնում հրատարակել «Հորինված պատմություն: Ադրբեջան եւ Հայաստան: Կեղծիքներ եւ փաստեր» գրքի համացանցային տարբերակը, որտեղ հեղինակը փաստական աղբյուրների հիման վրա բացահայտում է ադրբեջանական ստերն այն մասին, թե հայերը ոչ թե բնիկ, այլ եկվորներ են տարածաշրջանում:

«Այն, ինչ մենք ունենք այսօր, «բաժանիր, որ տիրես» կոմունիստական քաղաքականության հետեւանքն է», գտնում է հեղինակը: «Խորհրդային Միության սկզբնական 12 հանրապետություններից միայն Ռուսաստանը, Հայաստանը, Վրաստանը եւ Մոլդովան ունեին հնագույն պատմություն», գրում է նա, ավելացնելով, որ Ադրբեջանը հնարովի երկիր է, որի անունն անգամ փոխառնված է հարեւան Իրանում գտնվող նույնանուն նահանգից: «Թյուրք-թաթարական ազգությամբ բնակեցված Կասպից ծովի արեւմտյան տարածքը պետք է կոչվեր «արեւելյան» եւ «հարավային» Անդրկովկաս», շարունակում է Գալչյանը, «բայց մուսաֆաթականները որոշեցին Ադրբեջան անվանել երկիրը»: Պարսկաստանի կառավարությունն ու Իրանի ադրբեջանցիները բողոքեցին, բայց իզուր: Նման բան վերջին տարիներին տեղի ունեցավ նաեւ նորաստեղծ Մակեդոնիայի հետ, որին, ի պատասխան Հունաստանի բողոքների, հետագայում ավելացրին «Ն(ախկին) Հ(արավսլավիա) Հ(անրապետություն) (FYR) սկզբնատառերը, որոնք սակայն ներկայումս հազվադեպ են օգտագործվում»:

Ներկա տարածքային վեճերը կոմունիստների հնարած խաղերի հետեւանք են, երբ հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղն ու Նախիջեւանը նրանք հանձնեցին Ադրբեջանին: Նման եզրակացությունը հեղինակը ապացուցում է բազմաթիվ պատմական փաստերով, քարտեզներով եւ պայմանագրերով:

Գրքի հրատարակման գաղափարը ծագել է վերջին շրջանում «Ալիեւ հիմնադրամի» հովանավորությամբ լույս տեսած ստահոդ գրքերի քանակի ավելացման պատճառով: «Այդ հիմնադրամը միլիոններ է ծախսում հակահայ քարոզչություն ծավալելու նպատակով եւ գունազարդ, բարձրորակ հրատարակությունները երբեմն ձրի բաժանում է աշխարհի համալսարաններին, գրադարաններին եւ քաղաքական հաստատություններին», գրում է Գալչյանը, ավելացնելով, որ ադրբեջանցիները նաեւ դասախոսություններով հանդես են գալիս տարբեր երկրների հասարակությունների առջեւ եւ տարածում իրենց տեսակետները: Նման օրինակ է բերում նա՝ նշելով, որ հունիսի 4-ին Հյուսիսային Կալիֆոռնիայի Ադրբեջանական մշակութային ընկերության նախաձեռնությամբ գիտաժողով է անցկացվել «Բաքուն որպես 20-րդ դարի կարեւորագույն կենտրոն: Նավթ, միգրացիա, բազմազանությունը եւ էթնիկականությունը Հարավային Կովկասում 1900-ականների սկզբում» թեմայով, որին հրավիրվել է բանախոսելու Ֆուլբրայթի կրթաթոշակին արժանացած, Վիսկոնսին-Մեդիսոն եւ Կալիֆոռնիա-Դեյվիս համալսարանների պատվավոր գիտաժողով, Շուշիում ծնված դոկտ. Փարվին Ահանչին, Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության եւ հնաբանության ինստիտուտից:

Գալչյանի կարծիքով՝ հայկական կողմն ավելի ակտիվ գործունեություն պարտավոր է ծավալել ինչպես գրքերի հրատարակման, այնպես էլ դասախոսությունների կազմակերպման ձեւով, ադրբեջանական քարոզչությունների առաջն առնելու համար, որոնք «կաթիլ առ կաթիլ ծակում են ժայռը»:

Հ. Ծ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 21.06.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: